ԵՄՈՒՇՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱԿԱԿՐԿՈՒԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԻՑ

ԱՐՄԱՎԻՐ

1938

891.99
Ա-36

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲԱԼՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.
ПРОЛЕТАРИИ ВСЕХ СТРАН, СОЕДИНЯЙТЕСЬ!

ТА ЕЕВ 2011

ՆՎԻՐՎՈՒՄ Է
ԼԵՆԻՆՅԱՆ-ՍՏԱԼԻՆՅԱՆ
ԿՈՄՍԵՐԻՍՄԻՈՒԹՅԱՆ
20-ԱՄՅԱԿԻՆ

ПОСВЯЩАЕТСЯ 20-ОЙ ГОДОВЩИНЕ
ЛЕНИНСКО-СТАЛИНСКОГО
КОМСОМОЛА

АРМЯНСКИЙ ФИЛИАЛ АКАДЕМИИ НАУК СССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ И ЯЗЫКА

40687

ОБРАЗЦЫ
АРМЯНСКОГО АНТИРЕЛИГИОЗНОГО ФОЛЬКЛОРА

(СБОРНИК)

Составил и редактировал
А. ГАНАЛАНЯН

49983-65

ИЗДАНИЕ АРМФАНА
ЕРЕВАН ● 1938

ՀՍՍՀ ԵՐ 2011

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99
Հ-36

ՆՄՈՒՇՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԻՑ

(ԺՈՂՈՎԱԾՈՒ)

Կազմեց յեվ խմբագրեց
Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՐՄՖԱՆԻ
ՅԵՐԵՎԱՆ ● 1938

19 JUN 2013

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ

ПЕЧАТАЕТСЯ
ПО РАСПОРЯЖЕНИЮ ПРЕЗИДИУМА
АРМЯНСКОГО ФИЛИАЛА
АКАДЕМИИ НАУК СССР

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐՈՒՄ

Հայ ժողովրդական բանահյուսությունը, ինչպես և ամեն մի ժողովրդական բանահյուսություն, հարուստ է հակակրոնական բովանդակությամբ ստեղծագործություններով։ Այդ ստեղծագործությունները (հեքիաթներ ու առակներ, նովելներ ու անեկդոտներ, առածներ ու ասացվածքներ, յերգեր ու ասմունքներ, անեծքներ և այլն), վորոնց հորինողներն ու կատարողներն են ժողովրդի ծոցից դուրս յեկած բազմաթիվ անանուն հեքիաթախոս-ասացողներ, առակաբաններ ու յերգիչներ, պատկանում են հայկական ֆոլկլորի սրամիտ, կենդանի ու զուսեղ նմուշների թվին։

Աշխատավոր հայ գյուղացին իր դարավոր կենսափորձից լավ գիտե, թե ինչ դեր են խաղացել յեկեղեցին, կրոնն ու կրոնավորները ժողովրդի հարստահարման, շահագործման, ճնշման և ստրկացման գործում։ Նա տեսել է, ու զգացել իր կաշվի վրա, թե ինչպես քրիստոնեական յեկեղեցին՝ հանձինս իր սպասավորների, միշտ գնացել է տիրող-շահագործող դասակարգերի հետ, ընդդեմ ժողովրդի, թե ինչպես այդ յեկեղեցին հնազանդության և հպատակության իր քարոզներով աշխատել է դինաթափ անել ժողովրդին, կասեցնել նրա բուռն ատելությունը և պայքարը ճնշողների դեմ։ Դրա համար էլ ահա, բազմաչարչար հայ գեղջուկն իր բանավոր ստեղծագործությունների մեջ միշտ, աշխարհիկ պրոտեստույծների (կալվածատեր-իշխանների, պետական պաշտոնյաների, վաշխառու առևտրականների և բազմաթիվ այլ ցեցերի) կողքին «արժանի» տեղ է հատկացրել նաև հոգևոր շահագործողներին, ծաղրի ու պարսավանքի միջոցով մերկացնելով նրանց դասակարգային վողջ եությունը։

Ժողովրդի այդ պայքարը կրոնի, յեկեղեցու և հոգևորականության դեմ, մեզանում յերևան է յեկել դեռ շատ վաղ (12—13-րդ դարեր), միջնադարյան հայտնի առակագիրներ Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու անուններով մեզ հասած միջնադարյան ժողովրդական առակներում[1]։

Նույն պայքարը, ավելի սրված և առավել բացորոշ, դանում ենք նաև 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին գրի առնված՝ հայ ժողովրդական բանահյուսության խնդրո առարկա բնագրերի մեջ։

Չնայած վերոհիշյալին, ժողովրդական բանահյուսության նմուշների մեր ձեռքի տակ յեղած հրատարակություններում համեմատաբար քիչ նյութ կա հայկական հակակրոնական ֆոլկլորից։ Այս փաստը պետք է բացատրել նախ և առաջ բանահավաքների դասակարգային աշխարհայացքով։ Հայտնի յե, որ մեր անցյալի բանահավաքների ավագ սերնդի ներկայացուցիչների մեծամասնությունը յեղել են կրոնավորներ (Գ. Սրվանձտյան, Հ. Ճուլաբայան, Հ. Ճանիկյան, Գ. Հովսեփյան և այլն)։ Հասկանալի և բնական է, որ նրանք չեյին կարող շահագրգռված լինել հակակրոնական ֆոլկլորի նմուշներ հավաքելու գործում։ Ցավ իրոք, յերբ թերթում ենք հիշյալ բանահավաքների անուններով մեզ հասած ֆոլկլորային ժողովածուները, բացառությամբ Հ. Ճանիկյանի «Հնություն Անի»-ի (Թիֆլիս, 1895 թ.) մեջ յեղած միքանի (թվով յերեք հատ) հակակրոնական համեմատաբար անմեղ պատմվածքների, գրի առնված վոչ թե բուն ժողովրդական լեզվով ու վոճով, այլ բանահավաքի կողմից խմբագրված՝ համառոտված, կոկված ու դրականացված ձևով, այլև Գ. Հովսեփյանի «Փշրանքներ հայ ժողովրդական բանահյուսության» վերնագրով գրքույկում (Թիֆլիս, 1892 թ.) յեղած մեկ հատիկ կենդանական վեպի («Աղվես և կաքավ»), վորքան մեզ ծանոթ է, վոչ մի ուրիշ հակակրոնական նյութ չկա։

[1] Տես պրոֆ. Մ. Աբեղյանի «Հայոց միջնադարյան առակներն և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ» ուսումնասիրությունը, տպագրված «ՀԽՍՀ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի աշխատությունները» ժողովածուի I հատորում, Յերևան, 1935 թ., ապա արտատպված առանձին բրոշյուրով, Յերևան, 1935 թ., եջ 34—43։

Աշխարհական բանահավաքներն աշխատել են վերևում նշած բացը վերացնել։ Սակայն նրանց այդ հաջողվել է միայն մասամբ։ Այստեղ առաջին հերթին պետք է հիշել Սարգիս Հայկունու անունը։ Իր «Ժողովրդական առակներ» (Վաղարշապատ, 1907 թ.) և «Ժողովրդական յերգ, առած և այլն» (Եմինյան Աղգագրական ժողովածու, հատոր Զ, Մոսկվա—Վաղարշապատ, 1906 թ.) վերնագրերով ժողովածուներում, ի թիվս այլ նյութերի, նա մեջ է բերել մի շարք հակակրոնական մոտիվներ (առակ, առած, ասացվածք, յերգ, հանգավոր ասմունք)։ Այնուհետև, հակակրոնական ֆոլկլորի հատ ու կենտ նմուշներ (առակ, առած, յերգ և այլն) ունեն իրենց առանձին ժողովածուներում (տպագրված թե ձեռագիր) և պարբերական մամուլում մեր հին ու նոր բանահավաքներից՝ Գեվորգ Տեր-Աղեքսանդրյանը («Թիֆլիսեցոց մտավոր կյանքը», Թիֆլիս, 1886 թ.), Տիգրան Նավասարդյանը («Հայ ժողովրդական ավանդություններ», Յերևան, 1883 թ.), Հ. Ալլահվերդյանը («Ուլնիա կամ Զեյթուն», Պոլիս, 1884 թ.), Գեվորգ Շերենցը («Վանա սազ», Ա. մաս, Թիֆլիս, 1885 թ.), Յերվանդ Լալայանը («Ջավախքի բուրմունք», Թիֆլիս, 1892 թ.), Ուստա Գեվորգ Բարխուդարյանը («Բարոյական առածներ», Տփխիս, 1898 թ.), Աղեքսանդր Մխիթարյանը («Տաղեր ու խաղեր», Աղեքսանդրոպոլ 1900 թ., «Փշրանքներ Շիրակի ամբարներից», Աղեքսանդրոպոլ—Մոսկվա, 1901 թ.), Տիգրան Վարդանյանցը («Ժողովրդական անդիր բանաստեղծություններ», Թիֆլիս, 1901 թ.), Դավառացին («Յերգեր, առակներ և այլն Խոտրջրո», Տփխիս, 1903 թ.), Արտաշես Բարսեղյանը (ձեռագիր ժողովածու), Յերվանդ Պեզազյանը (նույն), Նազարեթ Մարտիրոսյանը (նույն) և Վարդ Բդոյանը (նույն)։

Հակակրոնական ֆոլկլորի նմուշների հավաքման գործում հատուկ յերախտիք ունեն մեզանում բանահավաքներ Սենեքերիմ Շալջյանը և Սահակ Մովսիսյանը (Բենսե)։ Ժողովածուիս անտիպ նյութերի՝ հատկապես առակների՝ մի շարք նմուշներ պատկանում են հիշյալ յերկու բանահավաքների գրչին։

* * *

Հայկական հակակրոնական ֆոլկլորի մեր ձեռքի տակ յեղած նմուշներում իրենց դասակարգային հագեցվածությամբ, առաջին հերթին, աչքի յեն ընկնում այն ստեղծագործությունները (առակ

թե առած, յերդ թե ասմունք), վորոնց մեջ մերկացված է հոգևորականության, վորպես անաշխատ, շահագործող ու պորտաբույծ մի դասակարգի սոցիալական եյությունը։ Այդ ստեղծագործությունների մեջ յերևան են գալիս յեկեղեցին (վանքը) և նրա դասական պաշտոնյաները (քահանա, վարդապետ), վորոնք պետական պաշտոնյաների, կալվածատեր-իշխանների և գյուղական բազմաթիվ ու բազմազգի ցեցերի (ռես, գզիր և այլն) նման ապրում են աշխատավոր ժողովրդի հաշվին, առանց աքնելու, կաշառակերության ու կողոպուտով։

Գայլն ու աղվեսը յերգայրանում են։ Մի առ ժամանակից դժվարանալով ապրուստի միջոցներ հայթայթելու գործում, աղվեսն ասում է գայլին. «Գել աղբեր, հարի յեր իդմյա շվար-շվար ոլորանք. չե՞ մարդիկ վանք շինած են հոնի, նստած անդատել կուտին, կը կխմին, մեր ինչն ա պակաս, մենք լե շինքինք իմալ ո վարդապետներ»։ Վորոշում են և անցնում գործի (տես «Գել ու աղվես» կենդանական վեպը)։

Վարդապետների ձրիակերությամբ ապրելը, «անդատել ուտելիմելը» արտահայտված է նաև ժողովրդական առածներում և ասացվածքներում։ «Ցեղ Վանից, ալյուր Մահմանից, ինչ կերթա վարդապետից», ասված է դրանցից մեկի մեջ։ Նույն բանի մասին հաճախ ակնարկվում է նաև մեր ժողովրդական հանգավոր ասմունքներում, վորոնք յերբեմն ժողովրդի կողմից դրվում են իրենց իսկ հոգևորականների բերանները (ասվում նրանց բերնից), վորպես պարոդիա՝ վերջիններիս կողմից յեկեղեցում կատարվող զանազան յերգ-աղոթքների։ Այդ ասմունքների մի նմուշն է, այնքան տարածված, հայտնի «Ամեն, ամեն ասեմ ձեզ, դատեք-բանեք, բերեք մեզ»-ը։ Սակայն, աշխատավոր ժողովուրդը սիրով չէ, վոր իր դատածը տվել է հոգևորականներին, վորքան եվ այդ քարոզեցին նրանք իրենց աղոթքներում։ Դրա համար եվ վերջիններս դիմել են անաշխատ դասակարգերի կաշառակերության ու կողոպուտի փորձված միջոցներին։ Բնութագրելու համար հոգևոր պաշտոնյաների այդ «բարեմասնությունները», ժողովուրդն իր առածներում և ասացվածքներում ասում է. «Տերտերի ասմունքը՝ միշտ է ուզմունքը», «Տերտերուն պես՝ տուրն են սորվեր», «Տերտերն առնելուն դոշաղ ա, տալուն՝ նաշաղ» և այլն։

Հոգևորականների կաշառակերության ու կողոպուտի սովորության մասին խոսվում է և մեր ժողովրդական յերգերում ու ասմունքներում։

— Վանքիցե՝ խալի.
Կռի[1] իգին,
Բառսուն փլորին[2],
Կապուս ջորին,
Մեռնի կին,
Առնե բեռին.
Հա՞ս է, հայր սուրբ։
— Հա՛ս է, հա՛ս է.
Ոխտը պուրտեմեն եկ անց է,

ասում է ժողովուրդը «հայր սուրբի» կողմից՝ հարուստ կաշառքով (այգի, վոսկի, ջորի) «չհասը» «հաս» դարձնելու մասին։

Իրենց սոցիալական եյությամբ արյունակից և մոտ լինելով աշխարհիկ շահագործողներին, հոգևորականները, ինչպես հայտնի յե, միշտ եկ հանդես են յեկել վերջիններիս հետ սերտորեն դաշնակցած ու համագործակցած։

Հայ ժողովրդական բանահյուսության մեջ, վոչ պակաս ցայտուն, արտահայտված է քրիստոնեական յեկեղեցու սպասավորների վարքագծի նաև այդ կողմը։

Քահանան՝ պատն ուտելու համար նախատում է խոստովանող կնոջը, սակայն, յերբ իմանում է նրա՝ իր բարեկամ հարուստներից մեկի կին լինելը, փոխում է խոսքը և մեղայի գալով՝ ասում. «Ավար, Ամբար խաթուն, դու՞ յես, անուշ ուտես, անուշ ուտես... ասված թողություն շնորհեսցե» (տես մեր ժողովածուի «Խոստովանահայրը» վերնագրով փոքրիկ պատմվածքը)։

Հարուստներին (ռես, քյոխվա և այլն) սիրաշահելու համար՝ նրանց ննջեցյալի վրա պատարագ անելիս, քահանան իր անգիր արած սովորական աղոթքի վրա ավելացնում է լրացուցիչ մի յերկու բառ ևս (տես ժողովածուիս «Ներթամ Տրապիզոն, գամ» և «Գիր չգիտցող տերտերը» առակները)։

Հոգևորականների՝ սիրող դասակարգերի ներկայացուցիչների հետ ունեցած սերտ մտերմությունն է վկայում և՝ «Քեհին

---

[1] Գյուղի անուն է։

[2] Վոսկի դրամ։

վրա լուս է իջել, վոչ է տեսե—զգիրը» ժողովրդական առածը, վորը մի տարբերակն է՝ «Տերտրոջ վրեն լուս իջավ, վոչ տեսավ—ժանկուչը», «Տանուտիրոջ վրա լիս վեր եկավ, վոչ տեսավ—զգիրը» և նման մի շարք այլ շատ տարածված ժողովրդական առած-ասացվածքների։

Ցեկեղեցական պաշտոնյաների, վորպես շահագործողների ու ձրիակերների դասակարգային էությունը հայկական հակակրոնական ֆոլկլորում բացահայտվում է նաև նրանց շահասիրության, ագահության և վորկրամոլության նկարագրի բազմաթիվ բնորոշ օրինակներով։ «Հոգևոր հոր» միակ դավանանքն ըստ այդ ստեղծագործությունների իր շահն է և իր վորովայնը։

Ահա այդպիսի շահասեր քահանաներից մեկը։

Մի անզրագետ կին, վորի համար քահանան մի քանի անգամ նամակներ եր գրել, իր յերախտիքն արտահայտում է «հայր սուրբին» շնորհակալությամբ ու որհնանքով։ Զբավարարվելով դրանով, շահասեր քահանան ասում է նրան. «Ո՛րհնած, աչքդ քեռքնա, ձեռքդ չորնա ըսե, ու 40 փարա տուր»։

Ավելի շատ և առավել գունեղ են հայկական հակակրոնական ֆոլկլորում հոգևորականների վորկրամոլության ու ագահության մասին յեղած ստեղծագործությունները։ Դրանց մեջ առանձնապես ջոկվում են ժողովրդական առածներն ու ասացվածքները։ Բնորոշելու համար քահանայի ծայրահեղ վորկրամոլությունը (նաև ագահությունը), հայկական առածներն ասում են. «Սար ու ձոր, երբիցու (կամ՝ տերտերու, տերտերոջ) փոր», «Տերտերի փորը վայ-վայի պնակ է, ինչ վոր դնես՝ կերթա», «Տերտերի փորը մեծ կըլլա, ճեղը՝ ոխտը հատ», «Տերտերներն ոխտը փոր ունին, վորքան տաս՝ կառնեն, կուտեն», «Տերտերին աղիքը քնար շիներ են, քանի զարկեր են՝ «անոթի յեմ՝ բերեք ուտեմ, անոթի յեմ՝ բերեք ուտեմ» ձայն կուտա յեղեր» կամ՝ «Տերտերին կաշին թմբուկի վրա յեն անցուցեր, քանի զարնես՝ «տուր-տուր» կասե յեղեր»։ Քահանայի կլասիկ վորկրամոլությունը ժողովրդի աչքում դարձել է ագահության ու անկշռության մի տեսակ չափանիշ։ Այդ է պատճառն ահա, վոր, յերբ ուզում են մեկի անկշռությունն ակնարկել, ասում են. «Ինչ վոր յերեցն ուտե ուրիշի տուն»։

Հայկական հակակրոնական ֆոլկլորի նմուշների հետևյալ ցիկլը կազմում են յեկեղեցական պաշտոնյաների անբարոյական

վարքի (հեշտասիրության, գողության) նկարագրին նվիրված ստեղծագործությունները։ Այդ ցիկլին են պատկանում ժողովածուին՝ «Կասես-կասես, չես իզա», «Տերտրոջ աղջիկ», «Բեհան ու Իրիցկինը», «Պարնիգեղցի Մոսոյի հարանիքը», «Գող տերտերը», «Գող վարդապետ», «Եչմիածնի գող վարդապետը» վերնագրերով առակներն ու նովելները, փոքրիկ հեքիաթներն ու պատմվածքները, այլև մի շարք առածներ ու ասացվածքներ, յերգեր ու սմոունքներ։ Վերջին և հիշյալ ստեղծագործությունների բովանդակությունը։

Ցեկեղեցում ժամասացության միջոցին քահանան մոտենում է ծանոթ կանանցից մեկին և բուրվառը ծխելով ու աղոթքի յեղանակին հարմարեցնելով իր խոսքերը, ժամադրվում նրա հետ՝ գիշերը տեսակցելու համար։ Գյուղացիներն իմանալով այդ լավ ընդունում են շնացող քահանային։

Կնոջ մահվանից հետո քահանան ուզում է ապրել հարազատ դստեր հետ։ Իր մտադրությունն ի կատար ածելու համար նա վոչ մի միջոցի առաջ կանգ չի առնում։ Սակայն նրա նյութած բոլոր դավերն ապարդյուն են անցնում։

Գյուղի հարսներից մեկի հետ «սիրողությունն» անող քահանան իր սիրուհու հետ բռնվում է գյուղի մոտ գտնվող մի ավեր մարագում՝ այդտեղ ապաստան գտած թափառական յերաժիշտների կողմից և ծաղր ու ծանակի յենթարկվելով՝ հալածական փախչում։

Քահանան հյուրընկալություն գտնելով պառավի տանը, գողանում է նրա վեց այծերը և վաճառում։ Այնուհետև վախենալով տիրացուից, թե սա կարող է հայտնի դարձնել իր արարքը, կիսում է նրա հետ այծերի վաճառքից ստացված գումարը։

Այսպես, աշխատավոր ժողովուրդն իր բանավոր ստեղծագործություններում խարանում ու ծաղրում է յեկեղեցական պաշտոնյաների վոչ միայն շահասիրությունը, ագահությունն ու վորկրամոլությունը, այլև նրանց անբարոյական վարքը։

Հայկական հակակրոնական ֆոլկլորի թեմաներից մեկն էլ հոգևորականների (գլխավորապես գյուղական քահանաների) ագահության, թերուսության ու բթամտության ծաղրն է։ Վերջինիս են վերաբերում մեր ժողովածուի՝ «Գիր չգիտցող տերտերը», «Սուտ տերտեր», «Բյոխվի վորդին քահանա», «Ճոչ պախ ինան տերտրոչ Ջոբի ֆասուլյեք», «Պայտը լուսնի տեղ ընդունող քա-

հանան» և այլն վերնագրերով առակները, նովելներն ու պատմվածքները։ Դրանց մեջ աչքի չեն զարնում աշխատավոր ժողովրդի ձգտումն իր դասակարգային թշնամուն՝ նրա ամենազգայուն տեղերից մեկում հարվածելու ուղղությամբ։ Այդ է ցույց տալիս մեր կազմած աշխատության վոչ բովանդակությունը։

Առանձնապես ցայտուն են այս տեսակետից հայ ժողովրդական առածները ու ասացվածքները։

Քահանայի սահմանափակ դիտելիքները բնորոշելու համար, օրինակ, ժողովրդական առածն ասում է. «Ժամտուն քանի ջոջ ելնի, տերտեր իր գլացած կը կարդա»։ Ցերը ուզում են մեկի անպետքությունն ակնարկել, ասում են. «Թե մարդ չը դառնա, տերտեր խոմ կու դառնա»։ «Տերտեր արա, գեղը գցի, թե վոր չապրի, գեռը գցի», «Կարդա, բալամ, կարդա, մարդ չընես, տերտեր-վարդապետ ելա կընես» և այլն։

Իր դասակարգային ատելությունը դեպի յեկեղեցին ու հոգևորականները՝ աշխատավոր հայ գյուղացին ծաղրի հետ արտահայտել է նաև պարապանքի ու անեծքի միջոցով։ Հայկական հակակրոնական Ֆոլկլորում քիչ չեն նաև վերջիններիս նմուշները։

Այսպես, օրինակ, մեր ձեռքի տակ յեղած՝ գութանի յերգերից մեկում, գութանի առանձին լուծերի վարիչ հոտաղները՝ մի շարք բարիքներ ցանկանալով մանկլվորին (խերն ու բարին), ուժտնվորին (ազատ աղջիկ), ամոլվորին (կարմիր խնձոր), միաժամանակ անեծքի խոսքեր են հղում՝ ռեսների, գզիրների և Ծնացած «հըրամկերների» հետ նաև վարդապետների ու տերտերների հասցեին, յերգելով.

Ազատ աղջիկ՝ ուժտնվորին,
Կարմիր խնձոր՝ ամոլվորին։
. . . . . .
Սեվ պոլոզներ՝ վարդպետներին,
Սեվ կողոպուտ՝ տերտերներին,
Մեղ ու վարձեր՝ ռեյսներին,
Սոխ ու սխտոր՝ գզիրներին,
Արյուն-գռեխ՝ հրամկերին...

Մի այլ տեղ, իր սանդի յերգի մեջ աշխատավոր գեղջուհին պատանք և կարում քահանային, վորովհետև նա «չհաց» և հայտարարել իրեն, զրկելով իր «յարից»։

Արեվն առեր վեր բոներուն,
Պատանք կարեմ մեր տերտերուն,
Զրխաս կանի ձիկ յիմ յարուն,
Ցես տի մնամ յիմ կրարուն։
Հե՛յ խանե, խանե, մալմ՝ խանե,
Ֆը՛ռ, ֆը՛ռ, ֆը՛ռ, ֆը՛ռ, ֆը՛ռ...

Մի յերբորդ տեղ, ժողովրդական «Ջանգյուլումի» յերգերում, գյուղացի աղջիկներն անեծքի խոսքեր են ուղղում, այս անգամ արդեն վարդապետին, նույն պատճառով («չհաց» հայտարարելով՝ իրենց սերը խափանելու համար).

«Կիրակի ել պաս կլինի՞.
Երծաթից լավ թաս կլինի՞.
Վարդիդ մեռնի վարդապետ,—
Սիրածը չհաս կլինի՞», և այսպես շարունակ։

Հայկական հակակրոնական Ֆոլկլորը չի սահմանափակվում միայն յեկեղեցուն և հոգևորականությանը նվիրված ստեղծագործություններով։ Այստեղ մենք հանդիպում ենք նաև զուտ աթեիստական մոտիվների, ուղղված կրոնի, զանազան սրբերի և իրեն՝ աստծու դեմ։ Տեսնելով իր առ աստված հղած աղոթք-գիմումների անհետևանք մնալը, աշխատավոր հայ գյուղացին կանգնել է աթեիզմի ճանապարհին, իր բանավոր ստեղծագործություններում արտահայտելով իր թերահավատությունը, ծաղրելով ու պարսավելով հարուստներին և ուժեղներին հովանավորող աստծուն և սրբերին։ Նրա հակացողությունները աստծու մասին հաճախ ներկայացրել են մի տեսակ խառնուրդ՝ յերկնային տիրոջ, աղայի, կալվածատիրոջ, առևտրականի ու թագավորի մասին ունեցած պատկերացումների։ Այդ հակացողությունները շատ ցայտուն դրսևորված են հետևյալ յերկու ժողովրդական առած-ասացվածքներում. «Վերն աստված, վարը՝ թագավորը» (ԾԱՖ., եջ 79), «Վերն իրիշկեմ՝ աստվածն ի, ցածր՝ ամիրեն» (ՎՍ. II, եջ 150)։ Հակացողություններ են դրանք, վոր մակնշվ[illegible] յերկրագործ մարդու մոտ, բնության տարրերի և շահագործողների ճնշման ազդեցությամբ։ Գյուղացին գիտե, վոր աստված, վորին ինքը ձեռք է կարկառում ծայրահեղ [illegible], հարուստների, շահագործողների հովանավորն [illegible] պարտատանն է։ «Աստված հա-

Գ. Ա. Մասեռ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴ
4983-65

ըստ դեցն ա» (ԵԺ, VI, եջ 24), «Աստծու գովքը միշտ հարուստն է երեւ» (մեր ժողովածուից), ասում է նա այդ առթիվ։ Սակայն, ժողովուրդը չի բավականացել միայն աստծու «թերությունները» նշելով։ Իր դասակարգային ատելությունը, այս դեպքում ևս, ինչպես և հոգևորականների նկատմամբ, նա արտահայտել է պարսավանքի ու ծաղրի միջոցով։

Մեր ժողովածուի հենց առաջին առակը աստծու դեմ ուղղված մի այդպիսի ցայտուն ծաղր է։

Աստծու դեմ ուղղված վոչ պակաս թունդ ծաղր է նաև մեր ժողովածուի «Շերեփը՝ կացին» վերնագրով առակը։ Ցեթե առաջին որինակում ծաղրվում է աստծու հիմարությունը, ապա այստեղ մերկացվում է նրա կաշառակերությունը։

Հայ գյուղացին ծաղրել է նաև աստծուն ուղղված յեկեղեցական աղոթքները, վերջիններիս բովանդակության ու յեղանակի նմանությամբ հորինելով ու տարածելով զավեշտական բովանդակությամբ զանազան յերգ-պարոդիաներ։ Նման ստեղծագործություններից է, որինակ, հետևյալ ժողովրդական յերգը, վորի մեջ քահանան ակնարկում է տիրացուին՝ գողանալ տան անկյունում դրված կացինը։ Իր խոսքերը նա «սրբագործում է» յերգի մեջ յերկու անգամ աստծու անունը հիշելով.

— Առ. տատրակին, առ. տատրակին,
Են տար, դիր մեջ տոպրակին.
Աստվա՜ծ, հարցն մերոց։

— Պոչն երկեն ի անիծածին,
Զպարտրկի մեջ տոպրակին։

— Տար դուս պոռ կոտրատի,
Են բեր, դիր մեջ տոպրակին.
Աստվա՜ծ, հարցն մերոց։

Իր ատելությունն աստծու դեմ հայ ժողովուրդը, շատ ուրիշ ազգերի նման, արտահայտել է նաև հիշոցներով։ Նրա հիշոցաշարում կարևոր տեղ ունեն աստծուն հասցեագրված հայհոյանքները։

Լավ հայացք ու վերաբերմունք չի ունեցել մեր ժողովուրդը նաև սրբերի նկատմամբ։ Վերջիններիս մասին նրա ունեցած հակացողությունները հիմնված են յեղել այն պատկերացման վրա, վոր նա ունեցել է թագավորի և սրա իշխանության մասին։ Ինչպես վոր թագավորն ուներ իր նախարարներն ու պաշտոնյաները, այդպես էլ, ժողովրդի կարծիքով, ասված է ունեցել իր ծառայողները։ Աստծուն, ինչպես և թագավորին ժողովուրդը դիմել է վոչ թե ուղղակի, այլ սրբերի միջոցով։ Յեկեղեցական ծառայողների նման, սրանց ևս նա ստիպված է յեղել կաշառել։ Յեկեղեցուն, խաչին և սրբերի ազատության ու նրանց տրվող կաշառքի մասին են խոսում մեր մի շարք ժողովրդական առածներն ու ասացվածքները, ասելով. «Յեկեղեցուն չանք մոմ չտաս, քու մուրազը չի տար» (ԵԺ, VI, եջ 238), «Վոչ խաչին խունկ խոստացի, վոչ էլ երեխին բլիթ» (ԱԾ, եջ 145), «Վոչ սուրբին մատաղ խոստացիր, վոչ էլ յերեխային բլիթ» (ԲԱ, եջ 33), «Տղին կակա, սրբերուն խունկ ու մոմ մի խոստանա» (ԾԱԲ., եջ 89)։

Կրոնավորների և աստծու նման սրբերը ևս ծաղրված են հայկական ֆոլկլորում։ Այդ ծաղրի մի վոքրիկ նմուշն է հետևյալ ժողովրդական ասմունքը.

«Սարի սրբ Գեվորգ պուպլուզիկ,
Քուռքա եփիմ, տամ քզիկ»,

և մի փայլուն որինակը՝ մեր ժողովածուի «Սլիկ երեց» վերնագրով առակը, վորի մեջ մերկացված են՝ Մովսես մարգարեն, վորպես իր ազգը խաբող և քառասուն տարի անապատներում ման ածելուց հետո նրան վոչնչացնող, Դավիթ մարգարեն՝ վորպես անբարոյական, քառասուն կին ունեցող և ուրիշների կանանց հափշտակող, Գաբրիել հրեշտակը՝ վորպես որական հաղար-հաղար մարդ զուր տեղը սպանող, և այլն։

Այսպես ահա, իր բանավոր ստեղծագործություններում (առակ թե հեքիաթ, առած թե ասացվածք, յերգ թե ասմունք, անեծք և այլն) աստծու և նրա զանազան սրբերի անունով՝ յեկեղեցական պաշտոնյաների կողմից հարստահարվող աշխատավոր հայ գյուղացին, դիպուկ բառերով ու ածականներով, գունեղ բնութագրերով ու նկարագրերով (այս բոլորը համեմված ու ներծծված ժողովրդական առողջ ու լիահնչուն յերգիծանքով) արտահայտել է իր ներսում կուտակված վոչ մաղձն ու դասակարգային բուռն ատելությունը վոչ միայն յեկեղեցու ու նրա պաշտոնյաների, այլև աստծու ու սրբերի դեմ։

* * *

Ներկա ժողովածուն ամփոփում է հայ պարբերական մամուլում, բանահյուսական նյութերի առանձին հրատարակություններում, այլև մեզ մատչելի ձեռագիր ժողովածուներում տեղ գտած հայկական հակաբոնական ֆոլկլորի նմուշները, գրի առնված տարբեր ժամանակներում։

Ցեղ վոբակով, և՛ քանակով ժողովածուի մեջ գերակշռում են անտիպ նյութերը։

Ընտրության ժամանակ զանց ենք առել բացահայտ պոռնոգրաֆիկական բնույթի, այլև բովանդակության ու արվեստի տեսակետից բոլորովին անարժեք կտորները։

Բնագրերը մեջ ենք բերել հիմնականում անփոփոխ վիճակում, այնպես, ինչպես գրանք գրի յեն առել կամ հրատարակել իրենք՝ բանահավաքները, տեղ-տեղ միայն կրճատելով առանձին բառեր ու արտահայտություններ։

Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

АНТИРЕЛИГИОЗНЫЕ МОТИВЫ В АРМЯНСКОМ ФОЛЬКЛОРЕ

Армянское народное творчество, как и творчество всех народов, богато произведениями антирелигиозного характера. Эти произведения (басни, пословицы, песни и др.), авторами и исполнителями которых являются многочисленные безыменные певцы - ашуги, вышедшие из недр народа, принадлежат к остроумным, живым и красочным образцам армянского фольклора.

Армянское трудовое крестьянство в своем устном творчестве всегда, наряду с светскими угнетателями, должное место уделяло и духовным эксплоататорам, вскрывая классовую сущность их через насмешку и порицание.

Эта борьба народа против церкви и духовенства у нас проявлялась очень рано (12—13 в.в.).

Проявления этой борьбы в ее наиболее обостренном и открытом виде находим и в интересующих нас текстах, собранных в конце 19-го и в начале 20-го веков.

В образцах армянского антирелигиозного фольклора своей классовой насыщенностью в первую очередь бросаются в глаза те произведения, в которых раскрывается социальная сущность духовенства как класса не трудового, класса паразитов и эксплоататоров. В этих произведениях церковь и ее прислужники (священник, архимандрит) уподобляются чиновнику, помещику - князю, деревенскому кулаку, которые, не работая, живут за счет трудового народа, взятками и грабежами.

Будучи по своему социальному существу кровно связанным с светскими эксплоататорами, духовенство, как известно, всегда действовало в тесном контакте с ними. В армянских народных баснях и пословицах не менее ярко изображена и эта сторона поведения духовенства.

В армянском антирелигиозном фольклоре встречается ряд ярких произведений, вскрывающих корыстолюбие, жадность и обжорство церковных прислужников. По этим произведениям, единственная догма „духовного отца"—это его личный интерес, его утроба.

Следующий цикл антирелигиозных народных басен, пословиц, песен посвящен описанию безнравственной жизни (сластолюбию, блудничеству) церковных прислужников.

Одна из тем армянского антирелигиозного фольклора—это тема высмеивания невежества и необразованности духовенства, в особенности деревенских священников.

Свою классовую неприязнь к духовенству армянское трудовое крестьянство, на ряду с высмеиванием его представителей, проявляло также через проклятие и укор. В различных видах народного творчества имеется не мало и таких образцов.

Но армянский антирелигиозный фольклор не ограничивается только произведениями, связанными с церковью и духовенством. Здесь мы встречаем и чисто атеистические мотивы, направленные против религии, разных святых и самого бога.

Настоящий сборник об'единяет фольклорные материалы антирелигиозного содержания как напечатанные в армянских журналах и отдельных изданиях фольклорных материалов, а также помещенные в имеющихся у нас рукописных сборниках, записанные в разное время, в разных местах собирателями фольклора.

В сборнике как по качеству, так и по количеству преобладают образцы фольклора, нигде поныне не публиковавшиеся. При выборе материалов мы обошли материалы явно порнографического характера, а также материалы не представляющие никакого интереса по содержанию и по своей художественной ценности.

Тексты в основном приведены без изменения, в таком виде, как они записаны или изданы самими собирателями, и лишь в редких случаях допущено сокращение отдельных слов и выражений.

А. ГАНАЛАНЯН

ԱՌԱԿՆԵՐ, ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ
ՅԵՎ
ՄԱՆՐ ՀԵՔԻԱԹՆԵՐ

ՊԱՌՎՈՒ ԽՐԱՏ ԱՍՏԾՈՒՆ

Աստված բարկացեր էր վեր մարթեկաց. կուզեր աշխարն ընցուցել։ Կը մտածի, կը մտածի, չի կանա աղեկ կայդեմ կընդնի։ Մե խատ խարիր տարեկան պառավ մ կը տիսնա, կասի՝ ինք ուր. «Ես պառավ խասե զերեզմնի պերան, ել աշխարի խաժար չի մտածի. եսոր կա, վաղ չկա, խորից խառցուցեմ, են աղեկ ձև շանց կուտա», կասի.

— Պառավ, ինչխ անեմ, վոր աշխար խողով, ճրով ընցնի։

— Աստված, կիտես ինչ արա, քսան-յեռսուն որ կիշեր անձրև արա, ցերեկ՝ արև, աշխար կը կործանվի։

Աստված պառվու խոսքով կանի։ Յեռսուն որ կիշեր՝ անձրև, ցերեկ՝ արև կանի։

Աշխար կործանվելու տեղ, ավելի կաղեկնա։ Ցանքեր, խոտեր, ծառ-ծաղիկ՝ աշար-քուշար կը դառնան։

Աստված ես պառվուն կասի.

— Պառավ, տու կասիր, վոր յեռսուն որ կիշերն՝ անձրև, ցերեկ՝ արև անի, աշխարընցում պիտի ելներ, ուր ե աշխար չընցավ...

— Բե պես ծռու վերեն ըսկուն կը ծծդան,—կասի պառավ։

ՍՇ., էջ 105 (Վն.)

ՇԵՐԵՓԸ՝ ԿԱՑԻՆ

Մե գեղացի եթում ա մեշան ուռ բերելու։ Տեսնում ա, որ մե լավ փետ կա։ Գալիս ա տուն, կնոջն ասում.

— Ա՛յ կին, եսոր գնացի մեշեն մեկ խատ սելի պետքական փետ տեսա, համա կտրելու միջոց չունեցա։ Գիշեր ինձի շուտ կիմացնես, կացին հաղբը կը գնես, եթամ փետ կտրեմ, բերեմ՝ տանեմ ծախեմ, ձիթահանքից ձեթ բերեմ՝ յերեխաները ուտեն։

Գիշերը շուտ ելնում ա, աջալու, կացինի տեղ վերցնում ա շերեփը, եթում ա։ Յեկի որ հասնում ա ծառին, շերեփը խփում ա կացնի տեղ։ Տեսնում ա, վոր կոթը մնաց ձեռը, կացին չկա։ Ըսկսում ա ման գալ, ասում ա.

— Աստված, իմ կացին գտնեմ, կալին քեզի մե կոտ ցորեն կուտամ։ Ման գալով՝ շերեփի թաթը գըտնում ա, ասում.

— Ահա, յես կացին ման կուքամ—հալա չեմ գտե, աստված շուտն ու շուտ կոտն ե ուղարկի, ուր հախ կուզե...

... Հալա կասեն աստված կաշառ չի ուտա...

Վ.Բ. (Կտ.)

ԱՂՎԵՍՆ ՈՒ ԿԱՔԱՎ

Աղվիս զկաքավ պռնից։
Կաքավ ըսաց.
— Ա՛ղվիս, ինչ տ՝ենիս։
Ըսաց.—Քի տ՝ուտիմ։
Ըսաց.—Փառք տու աստուն, նոր զի կի։
Ինչ փառք իտու աստուն, կաքավ բերնեն թռավ։
Աղվիս դարձավ, ասաց.—Ենու տուն ավիր ըմնի, ինչ չուր կուշտ չուտը՝ փառք տա աստուն։

Փբ., եջ 30 (Ապ.)

ՍԼԻԿ ԵՐԵՑ

Կնիկ, կըսե անգամ մը Սլիկ երեց, ելի զմեր տուն բառնանք վերը մեր իշուն, առնինք զմեր ճժեր երթանք դրախտ։

Զտուն կը բառնան, զճժեր կեցկին հառաջև ուրանց ու կընկնան ճամբա։ Շատ ու քիչ կերթան՝ Ադամ կիգա ասստ։

«Յա տերտեր, իմեր եղնի, իդա հրմլա ճժով-պժով, քոչ ու բարխանով դմր կերթաս»։

— Կերթամ դրախտ։

«Ի՛մալ դրախտ, երեց, դու ծուռ իս, խելքդ թռուցեր իս, հարի մարդ չմեռնի, չերթա են դիու աշխարք, կրնա որ երթա դրախտ»։

— Դու վոն իս, հրմլա չգիտուքենով կը զրուցիս, ըսե զքու անուն տեսնամ։

«Յես Ադամն իմ, չըս ճանչնա»։

— Ի՛մալ տո Ադո, Ադո, հորին աստված զքըզի առոք-փառոք ստեղծեց, դրեց անմահուքենի դրախտ, աշխարքի անուշ-չանուշ տվեց քզի որ ուտեր, խմեր, ուրախներ. դու չկշտացար, ելար զաստծու պատվերանք կոտրեցիր, զծառի պտուղ կերար, զմըզի լե հընկըցուցիր իդա հալ, չի՞ իդա հըմեն զքու մեղքն ե կը քաշինք. հը՞մ, դու եդ քու հալով կրցար գացիր դրախտ. յես չըմ կը՞ընա։

Տեր Սլիկ կը քաշե զդոպալ կընկնա Ադամու ետևեն, Ադամ կը փախնի, ինք կընցնա երթա հրատուր ճամբուն։

Շատ կ'երթա, քիչ կ'երթա, Մատոս աղեն կը հանպատի իրիցուն.

«Որշնյա ի տեր, տեր Սլիկ»։

— Աստված որշնե։

«Երեց, դմր կերթաս»։

— Կ'երթամ դրախտ։

«Ի՛մալ դրախտ. ծոռ՞ իս, տերտեր, մարդ հարի չմեռնի, չերթա են դիու աշխարք, կրնա՞ երթա դրախտ»։

— Դու վորն իս։

«Յես Մատոս աղեն իմ»։

— Տո՛ քրքրուկ Մատո, հորին աստված քըզի հարիր տողսան և ին տարի ումր տվեց, դու չկշտացար. աստծուց ել ումր ուզեցիր, աստված լե զուր հրիշտակ ճամբեց քու մոտ, քզի ըսեց. Մատոս աղա, զքու ձեռք զարկ վըր յեզան պառեկին, ինչխդար որ մազ ընկավ ձեռացդ ի տակ, ենխդար լե քըզի ումր կիտամ, անկըշտուն քրքրուկ Մատո, դու հորին զփորդ թալեցիր վըր յեզան. տեսա՞ր իմալ հրիշտակ լե տվեց վըր քու գլխուն, զքու հոգին առավ։ Դու քու ագահուքենով կրցար գացիր դրախտ, յես չըմ կընա՞. կերթաս դեն՝ թե չե զճաներդ կը ճարդեմ։ Սլիկ երեցն որ զդոպալ կը վերցու, Մատոս աղեն կը փախնի, ինք կընցնա կերթա։

Գացին գացին՝ Նոյ նահապետն եկավ ասստ.

«Որշնյա ի տեր, տեր Սլիկ, դմր կերթաս»։

— Աստված որշնե, կերթամ դրախտ։

«Տերտեր, ծուռ մ' եղնի, մարդ հարի չմեռնի, կրնա՞ երթա դրախտ»։

— Դու վորն իս զիդա խսեն ընձի կենես։

«Յես Նոյ նահապետն իմ»։

— Հը՞ն, կրցար զաստված խաբեցիր, ջրհեղեղ

հանել ավիր, զաշխար հրմեն ավրեցիր հապեմ գացիր դրախտ. քու հոգին ելնա՝ յես լե պտի երթամ։

Գնաց գնաց՝ Աբրահամն եկավ ռաստ.

«Ֆեր եղնի, Սլիկ երեց, ռուբ կերթաս»։

— Կ'երթամ դրախտ։

«Ծուռ մ' եղնի, երեց, հարի մարդ չմեռնի, կրնա՞ երթա դրախտ»։

— Տո դե մեռի՞, աղեկ մարդ մ' եղներ՝ գքու տղեն չբը մորթի, զգալալ տղեն մորթեց՝ կրցավ գնաց դրախտ, յես չբմ կրնա՞։

Սլիկ երեց զգոպալն որ կը վերցուս, Աբրահամ կը փախնի, ինք կընցնա կերթա։ Կերթա, կերթա՝ Մովսես մարգարեն կիդա ռաստ.

«Տեր Սլիկ, հո՞ւբ կերթաս»։

— Կերթամ դրախտ։

«Երեց, դու ծո՞ւռ իս, հո՞ւռ, հրմլա ճժով-պժով, հալահլով ի՞մալ կերթացվի դրախտ. մարդ պտի մեռնի, երթա են դիու դունիեն, հապեմ մտնա դրախտ»։

— Դու վո՞րն իս, հրմլա զըմեն ճամբեք ինձի նշանց կիտաս։

«Զե՞ յես Մովսես մարգարեն իմ»։

— Տո թլոլ Մովսես, դու շա՞տ արդար մարդմ՝ ես, խաբեցիր գքու ազգ, բերիր անապատներ քառասուն տարի գվըռցուցիր, զմեն ջարդ ու փշուր երիր, դու որ շատ արդար եր, հորին սարի գլուխ մեռար, գավեթյաց երկիր երես լե չկրցար տեսար, գնա դեն, գնա, թե չե զգոպալ վերցուցի զոտներդ կը ջարդիմ։

Սլիկ երեց զգոպալն որ վերցուց, Մովսես փախավ, ինք ընկավ ուր ճամբեն։

Ետկ մը գնաց, Դավիթ մարգարեն եկավ ռաստ.

«Տեր Սլիկ, դո՞ր կերթաս»։

— Կերթամ դրախտ։

«Երեց, ասված գքու տուն չակոլե, կնիկ-ճժով ի՞մալ կերթաս դրախտ, ծո՞ւռ իս դու»։

— Հալա գքու անուն լե ըսե, տեսնամ գու՞ վորն իս։

«Դավիթ մարգարեն իմ. քո՞ռիս, չբս ճանչնա՞»։

— Տո յա՞ քոռնաս ու կուրնաս, տո՞ պուժիկ Դվո, քառասուն կնիկ երիր, զՈւրիեն սպանիր, զկնիկ հուրնե խլիր, դու կրցա՞ր գացիր դրախտ, յես չբմ կրնա՞. քելե կնիկ, սբբ Կարապետու մառմառ գերեզման լե գինա՝ պիտի երթամ դրախտ ու հրմլա քոչ ու բարխանով պտի երթամ։

Գացին, գացին՝ մարդ մը են գիմեն «հո՞շա, հո՞շա» երեց՝ ու եկավ գերիցու իշու հարջեն առավ, բոռաց.

«Ե՞, դու վո՞րն իս, ի՞նչ մարդ իս, հրմլա քոչ ու բարխանով ո՞ւբ կերթաս անհրամանք»։

— Յես տեր Սլիկն իմ, տեր Սլիկ, առեր իմ զիմ ճիժ ու պիժ, կերթամ դրախտ։

«Դարձի յես, դարձի՞ թե չե զնոգիտ իդա սհաթին կավանդիմ, չարուխ-բճով, կնիկ-ճժով, եշ ու բարխանով ի՞մալ կերթաս դրախտ»։

— Դո՞ւ վորն իս, հրմլա կտոր-կտոր կեղնիս, հուքմ կը բանցուս։

«Հոգեառ Գաբրել հրեշտակն իմ, քո՞ռ ե քու երկու լուս»

— Տո՞ քոռ Գրո, դու որական հազար-հազար մարդ հախ, նահախ, կսպանես, դու կրնա՞ս երթաս դրախտ, յես չբմ կրնա՞։ Կը քաշե զգոպալ կը լարե Գաբրելի հետեվ լորամեի մը կը թալե, մեկ կը շիկցու ի ճանեն, Գաբրել զմեկ վոտք կը վերցու, թոփլտելեն կը փախնի, Սլիկ երեց կերթա հրա ուր ճամբուն։

Շատ կերթան, քիչ կերթան՝ հեռվանց սպիտակ քոշկ ու սարեմը կերևա. կնիկ, կըսե Սլիկ երեց, կա ու չկա՝ իդա դրախտն է, արի նստենք, մըզի փըշուր մը հաց ուտենք, ըռըաթինք, յետև ելնանք երթանք դրախտ։ Նստան կերան, խմեցին, ըռըաթան, ու ելան դեմ երին ի սպիտակ տներ, դրռ չեն հասած են տներուն՝ որ մարդ մը եկավ կանավ հառաջև ուրանց հարցուց՝ դու՞ վոն եք։

— Ցես՝ Սլիկ երեցն եմ, իդա իմ երեցկին է, իդոնք՝ իմ ճժկներն են, ինա լե իմ իշուկն է, զիմ պաշարն՝ իմ բարձի վրեն, եկեր ենք որ մտնանք դրախտ։

«Երեց, կըսե եդ մարդ, դու խոմ ծուռ չես, չե՞ դու հլամուն-տերտեր իս, վըր քու արևուն՝ կարդցվոր իս, զգիր ու գրի զորութին գինաս, սև ու սպիտակի վրեն կաչքիս, հարի մարդ չմեռնի, չթաղվի, չերթա են դիու աշխարք, կրնա՞ երթա դրախտ»։

— Ախըր եկեր ենք կանի դրախտի դուռ, թող մտնանք ներս, խանե զդրախտի երեսը տեսնանք։

«Չե՛, անկարելի յե, չեղնի որ չեղնի եդ բան»։

— Դու՞ վորն իս, զքու անուն լե ըսե հիմանամ։

«Ցես Քրիստոսն իմ»։

— Հայ աստված զքու տուն լե ավերե, որ դու շատ աղեկ մարդմ՝ եղնիր՝ զքզի լե չընբըռնի, չընչարչրի։ Դարձի, կնիկ, դարձի երթանք, աստված քարուքանդ ու ըրիշակ ենե հըմալ դրախտն, որ եդա խղար դավաճի չեղնի մարդու։

Տեր Սլիկ կառնե զուր կնիկ ու ճիժ՝ փոռ ու փոշման կը դառնա յետ։

Բլխ., եջ 106—108 (Բլխ.)

ՊԱՌԱՎ ԴԱՍ ԿԸ ՏԱ ՏԵՐՏՐՈՋ

Որըմ՝ տոն որ կըլնի. ժողովուրթ շատ կը լցվի մըչ ժամտան։ Ժամ ինչ կես կ՚ըլնի, գիրք կը կարտան, տերտեր քարոզըմ կը տա։

Կասա՝ «Ոռնյալ ժողովուրթ, պարի ուղեք ձե չար ուզողներուն. կասա՝ քու տրկըցին ուղի պարի, վոր աստված տա քե պարի։ Կընքտեր, անըսգամ մ՚ելնեք, իրարու միս մը՝ ծամեք. ինչ ճաշ վռիկ կեփեք, ձե մեռլի բաժին խանեք։ Աղքատասեր ելեք, աղքատին ողորմութեն երեք։ Ֆեր մեռել մը քաշեք, վոր չերթաք տըժողք։ Տղա՛ կընքտեր, շատ անամոթ եք ելի, վաղ ձե առջև մեռնել կա, կը մեռնեք, ձեր խոգին եցկեք ձեր միտ։ Գողութեն մենեք, ոռշնածներ»։

Տերտեր ինչ քարոզ կը տա, կ՚իրիշկա մըչ ժողովրթին, կըխի պառավ ըմ հա ուր ծեռ կը տանի թըխ տերտեր, կը տանի ուր ականջ, կը տանի ուր պերան հա եատպես կենա։

Տերտեր ժամ կասա, ժամ կ՚ելնի։ Պառավ կը գա՝ չ կառնի։

Տերտեր կասա.—Ո՛ըշնած ժամիկ, են ինչ թիզ ելը, տու մըչ ժամտան կը չափեր։

Կասա.—Տե՛րտեր, գիտե՞ս յես ընչի թիզ կը չափեր. յես կը չափեր քու պերնից չուր քու ականջ՝ մեկ թիզ ա, քու մտեն չուր կը գեր խասներ իմ մոտ՝ կըլներ ութ թիզ, ենի հե՞ր քու քարոզ քու ականջ չը լըսի, իմ ականջ ութ թիզ զատնուց տը լսի։

ԱԲ., № 581 (Ռշտ.)

ԼԵԶՎԻՍ ՏԸԿԻ ՔԱՐ ԽԱՆԵ՞Մ...

Վարտապետի փոքրավոր շատ քուֆուր կաներ։ Վարտապետ ինոր կասի.

— Լեզվիս տակ քարըմ տի, վոր միտտ ինի, քուֆուր անեմ։

Տղեն ըսկուն ել կանի։ Մե ժամանակըմ կընցնի վերեն։ Որը՞ սիջիմի պես անձրև կ'ուզեր։ Վարտապետն ուր փոքրավոր գեղի մեչեն կընցնին։ Կընդա մեկն կելնի դուռ կ'ասի.

— Հայը սուրփ, քիչըմ կայնի ետտ տեն, չում յես գամ։

Վարտապետ ուր փոքրավոր կիտեն թե՝ ուրենց ներս պիտի կանչի, կնաց ներս պատրաստութեն տիսնա, վոր գա կանչի։ Կայներ ին անձըրվու տակ՝ կաչկին։ Կնիկ, քիչըմ յետ, տառնա կուգա կ'ասի.

— Կնացե՛ք, հայը սուրփ։

— Ոխնած, մե ինչի՞ կայնըցուցիր եսա անձըրվու տակ, եսա կանդար գախ։

— Հայը սուրփ, խավս թուխս տրիցի, քե կայնըցուցի, ծվեր շարիցի խավու տակ, վոր քո գլխու կընգուխի պես՝ ճեատեր պուպուշով ելնեն։

Վարտապետ ել ի՞նչ ասի...

Փոքրավոր կ'ասի.

— Հայը սուրփ, լեզվիս տըկի քար խանե՞մ։

— Խան, վորտի, խան, ժամանակն ի...

ՍՇ., եջ 68 (Վն.)

ՏԵՐՏՐՈՋ ՄՈՒՐՈՒՍ

Տերտեր կը մեռնի։ Բանիմ՝ որ յետ, գեղակիցներուրենց մեջ խոսքի կը պռվեն՝ թե մեր տերտրոջ մուրուս կ՚ը, թե չը կեր։ Մեյ քանիյ կասեն՝ կեր, մեյ քանին՝ թե չը կեր։ Կերթան մո տիրուհինին։

— Տիրուհի՛, տերտրոջ մուրուս կ՚ը, թե՝ չը կեր։

— Պամ՝ կեր։

Կերթեր կուկեր,
Նամ-նամ կ՚աներ,
Ել չեմ կիտե՝
Կ՚ը, թե չը կեր։

ՍՇ., եջ 38 (Վն.)

ԻՇՈՒՆՑՏՈՒՐ ԽՈՍՏՈՎԱՆՈՂ

Իշունցտուր խոստովանողըմ կընաց մը տերտեր, ուր մեղքն խոստովանավ, ասաց թե՝

— Տերտեր, իշունց կուտամ։

Տերտերն ասաց.

— Ետա չելավ, յես քե չեմ կանա թողութենն տա, քանի վոր շատ իշունց կուտաս։

Համա, խոստովանող մարթն խասավ, տերտրոչ ձեռ պռնեց ուր ատրմնիրով, քիչըմ ճխթեց։

Տերտերն ասաց.

— Յա, տու ծռա՞ր, ախպեր։

Մարթն պան չասաց, մենայ թե՝ ատամ քիչմ՝ ավելի ճխթեց։

Տերտերն ասաց.

— Ծո, ոխնած, թո պաց, ծո անիծած, թո պաց։

Իսկի մարթ են տեղրահ չենե, մենակ թե՝ ատամ քիչ-քիչ կը ճխթի։

Տերտերն ասաց.

— Ծո, քո խերն անիծեմ, քո մերն անիծեմ, ծո...

Համա, մարթն ձեռն իթող պաց, ասաց.

— Տերտեր, ընչի՞ իշունց տվիր։

Ասաց.

— Չե՞ խասուցիր չում բողազս, ե՜...

Մարթն ասաց.

— Չե՞ վոր իմն էլ կը խասուցեն չում են տեղ, նոր իշունց կուտամ։

Տերտերն ասաց.

— Էլի կընա, ոխնած, ատված թողություն շնորհեսցե։

ՍՇ. (Վն.)

ԿԱՄ ՅԵՍ ԿՄՆԱՄ ԳԵՂ, ԿԱՄ՝ ԶՈՄԱՐ

Հարուստ մարդ մե մեռեր եր. տերտեր պատարագ պտի եներ։ Ժամ երթըլուց հառեջ կերթա միս կառնե։ Վոխչըրի մե ճուռ ձեռքն առած տուն գիկեր. Զոմար—ռեսի շունը—յետևանց հոփ, կը զարկե, զճուռ կը թոցու ձեռքեն ու կը փախնի։ Տերտերը կը խռովի, գիկա նստի տուն, ուր տեղեն ժամ չիգա։

Ժողովուրդ լցվեր եր ժամ, կիշկեն որ տերտեր գա, տերտեր չկա... Պատարագի տեր կերթա, տերտեր կասե.

— Ժողովուրդ հըմեն լցուկ ին ժամ — քըզի կիշկեն. հանգան ե ահագին հաց ու զատ ինք երի. փչացավ, կերթա, կորի. հելի երթանք ժամ։

— Չե վոր չե, յես ժամ գալացող չիմ. Զոմար իմ ձեռքեն միս թոցու, տանե ու յես ժամ գամ. — չեղած բան ե...

— Տերտեր, քու բախտն ինք հընկե. եդ հմալ բան մենի. հելի ժամ երթանք. հայվան ե ու միս փախցուցեր ե, ինչ ենինք։

— Չե որ չե, յան Զոմար կը մնա իդա գեղ, յան՝ յես...

Ել չընք գինա՝ Զոմար մնաց գեղ, թե՞ տերտեր։

ՍՄ., եջ 227—228 (Բլխ.)

ԳԱՎԸՌՑԻՆ ՈՒ ՏԵՐՏԵՐԸ

Գավըռցին զտերտեր տուն պիտի կանչեր հացի։ Կնկան թանքի կենե՝ 5—6 հոգու հաց ու զատ պատրաստել չըմքի լսեր եր՝ «Սար ու ձոր, իրիցու փոր»։

Տերտեր գիկա, մեկ ամսն զատ կուտե, կը քաշվի մեկդեն։ Տանուտեր կասե.

— Մեռնիմ քըզի տերտեր, հորին քաշվար, կը վախենաս հաց ու զատ քի՞չ ե. խուրձ մը լե առվուտ իմ տղկի, կուշտ կիր ու գնա։

ՍՄ., եջ 171. (Բլխ.)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ

Նմուշներ հայկական հակակրոն. Քոլկոռեց—2

ԳԵԼ ՈՒ ԱՂՎԵՍ

Գելն ու աղվես աղբեր կեղնին։ Են մեկ որ աղվես գիլուն կըսա.

— Գել աղբեր, հարի յեր իդլմա շվար-շվար ոլորտինք. չե՞ մարդիկ վանք շիքած ին. հոնի նստած անդատել կուտին, կը խմին, մեր ինչն ա պակաս, մենք լե շիքինք՝ իմալ վարդապետներ։

— Շատ ադեկ կըսիս, ըսեց գել, շիքինք ու շիքինք։

Աղվես առավ զգել, մտան քարիմ՝ տակ ու փորեցին, քարի տակ քոնդեցին. աղվես իշեց, տեսավ քար պատելու վրա ա.

— Գել աղբեր, ըսեց, դու փորա, յես նեղեցուկ իմ, փշում՝ ըռհաթիմ. ելման գիգամ, փորինք։

Գելն եր, վանք պտի շիքեր. դելըպավ փորել. վռազ-վռազ փորելու հետն եր. մեկ լե տեսնես մեծ պալ մի պատավ վրեն։

Գիլու գլուխ ճնաց պալի տակ, հետեն ընկե դուս, ուռե, փուք կիտա դուս, ըսեց ուրին ուրին. «Վանք շիքողի հալը տես, հոգին դոիրվի կիտա դուս»։

ԺԱ., եջ 32—33 (Ալշ.)

* * *

Կին մը կոչելով տուն յերեցն՝ կը գանգատի տան կատվեն, թե՝ այս ինչ պղնձե ամանեն ջուր լակեր ե, կը խնդրե որհնել պղծյալ անոթն։ Ըստ խնդրանացն՝ տեր-պապան կ'որհնե պնակն և կը մեկնի։ Քանի որ հետո դարձյալ կը հրավիրե և նույն անոթն կամ ուրիշ կաթսա մի որհնել կուտա։ Յերբ տեր-պապան յերրորդ անգամ կը կոչվի՝ կըսե.

— Փոխանակ կատվին լակած անոթներն հետզհետե որհնելու, լավագույն ե մի անգամ և եթ կատվին բերանը որհնել, վոր լակածն պիղծ չհամարվի։

ՀԱ., եջ 203 (Ակն.)

ՍՊԻՏԱԿ ԵՐԵՍԸ

Մեկ տիրացու սաղմոս եր կարթում իրենց տան մեջը։ Մե քանի ջահել տղեք միտք են անում իրանց մեջ մե ոյին բերել ըտրա գլուխ։ Գալիս են իրիկուն ըտրանց տանիքը, երթըսի վրեն՝ տեսնում են կարթում ա սաղմոսը։ Ձեն են տալիս տղեքը երթըսի վրայից.

— Ո՞վ մարթ, ասում են, հերիք և հնաս ես դառը աշխարք, աստված քու ձեն լսեց, մեզ ղրկեց քեզ տանենք յերկինք։

— Սպասեք... տեր, դուք ովքե՞ր եք...

— Մենք Գաբրել հրեշտակներ ենք, շուտ վերջացու քու ուսմունքը, վոր քեզ վեր քաշենք։

Յերբ վոր ուսմունքը վերջացրեց, պարանը կախին երթըսից, տիրացուն կապեց մեջքից.

— Պատրաստ եմ, տեր, ասաց, քաշեք։

Տղեքը քաշեցին մինչև գլուխը երթըսից դուրս հանին, մե մեծ կճուճ մածնաթան շրջեցին գլխին ու պարանը թորգեցին... Տիրացուն ընկավ թոնիր, ուշկը գնաց։ Յերբ ուշկն եկավ, դուրս եկավ թոնրից, ասաց.

— Մեղա՜ քեզ տեր, ինչքա՞ն մեղավոր ի, վոր պարան կտրվավ...

Տիրացուն իրեն նայելով տեսավ, վոր վոտից գլուխ սիպտակ, մածուն չորացե վրեն, ասաց.

— Փառք քեզ տեր աստված, ասավ, ելի վոչինչ՝ սպիտակ երես դուս եկանք։

Վ.Բ. (Կա.)

ՊԱՍԱԿԵՐ ՎԵՂԱՆՑԻՔ ՅԵՎ ՎԱՐԴԱՊԵՏԸ

Վեղան գյուղը հասարակությունով մեծ պասը չեր պահում։ Յեկող քարոզիչների քարոզն անոգուտ եր անցել։ Թարվեզից մի վարդապետ իրա տիրացուի հետ գալիս և քարոզելու, այն պայմանով, վոր հաջողելուց հետո առաջնորդը նրան մի վանքի վանահայր նշանակի։ Հասնելով գյուղը, իջնում ե յերեցփոխի տանը։ Յեկեղեցու տախտակը թակում են. հավաքվում ե հասարակությունը։ Քարոզիչն իրա բոլոր ճարտարությունը բանեցնելուց հետո, հասարակությունից մի ծերունի առաջ գալով, ասում ե.

— Մ՞ի ըրչվորդ (հաջորդ), դե մեր ջահելների միտքն այն եր, վոր միանգամայն պասմե ռատ անի. իսկ քու տեղը սարի չափ ծանը ե, և յես նրանց պատասխանը կը տամ, ասա խնդրեմ՞ քանի՞ որ պիտի պահել պասը։

— Որհնյալ լինիս, ծերունի՛, հայտնի բան ե, վոր 50 որ,—պատասխանել եր վարդապետը։

— Հապա այն դիմացի գյուղը քա՞նի որ պիտի պահի, հարցրել եր ծերունին, ձեռքը մեկնելով դեպի դիմացի գյուղը։

— Հայտնի բան ե, վոր 50 որ։

— Յերեխա՛ յես հաշվել մեզ, ի՞նչ ե, ասել եր ծերունին, այն գյուղը 50 տնավոր ե—50 որ պաս պա-

հի, իսկ մենք 25 տնավոր, մենք էլ՝ 50 որ։ Այդպես չի կարելի։ Յեթե տան վրա կբաժանես, մենք էլ կպահինք, իսկ յեթե վոչ, այդ՝ դու, այն էլ ճանապարհիդ, ինչպես վոր յեկել ես, այնպես էլ գնա...

Xժ. (Վդն.)

ԾԱՂՐՎԱԾ ՎԱՐԴԱՊԵՏԸ

Յերեկոյան հավաքվել եյին մի քանի մարդիկ և վարդապետի ու սրա սարկավագի հետ նստոտել որթոջաղի շուրջը և զրույց սկսել։ Վարդապետի աչքը ընկնելով պատից կախված վայրի խոզի կաշվին, հարցրել եր.

— Մի՞թե այստեղ վայրի խոզ պահում են։

— Ի՞նչպես չե, պատասխանել եր մեկը։

— Խնդրեմ պատմել՝ թե ինչպես են վորսում, վորովհետև շատ հետաքրքրական ե։

— Արա, Պետի, դու վորսկան ես, դու պատմիր, ասել եյին այս ու այն՝ Պետուն։

— Ա՜յ ըրջվորդ, սկսել եր Պետին, դնենք թե դու շունն ես, իսկ յես վորսկանը։ Տան որով առաջ քեզ յալ եմ տալիս, ուտում ես, վիզդ այնքան հաստում ե, վոր կացնով չի կտրվի։ Քեզ առնում եմ, գնում շամբի մոտ։ Յես «Հը՜ռ-հը՜ռ» կանեմ, իսկ դու կը հոտոտես։ Ցերը խոզին տեսնեմ, քեզ «քուշ» կը տամ. կը գնաս և խոզի հետևից կը բռնես։ Յես կը հասնեմ քեզ ոդնուԹյան, խանչալս կը խրեմ խոզի սիրտը, կսպանեմ։ Հետո Թափանը, աղիքներն ու իԹ յեմաղը քեզ կը տամ, կ'ուտես, շրԹունքներդ կը լպստոտես, պոչդ կախ արած կը գնաս և քարի վրա կը պլպլզես, սպասելով ինձ։ Հենց վոր տեսար Թե՝ ավարտում եմ, դու վազելով կը հասնես մեր տուն, հանաքվարի կը հաջես մե-

բոնց վրա, մերոնք կիմանան, վոր ապրուստ եմ բերում։ Կը բերեմ, միսը բաժին-բաժին կանեմ, խոզը կախ կտանք տրխի համար, իսկ մերոնք քեզ քյութ կը տան, կուտես և կը գնաս դռանը կը թաղնես, մինչև նորից վորսի գընալը կսպասես...

— Ա՜յ վորդիք, այդ ինչ ավանակ մարդիկ եք յեղել, ասել եր վարդապետը։

— Արա, ավանակ ինչ ասել ե, կամաց հարցրել եր մեկը սարկավագից։

— Ղոչաղ մարդին ավանակ կասեն, պատասխանել եր սարկավագը։

— Մենք ինչ ավանակ ենք վոր, պատասխանել եր սարկավագին հարցնողը, ավանակը մեր ընջվորդն ա։

ԽԺ. (Վղն.)

ԿԱՍԵՍ-ԿԱՍԵՍ, ՉԵՍ ԻԳԱ

Կ'ելնի-չելնի, մե խատ գեղայնու տերտեր։ Եսա տերտեր ուր աչք կը թալի Զըլֆո անվոր կնգամ' վերևն։

Որըմ Զըլֆոն կը զարտրվի կ'երթա ժամ։ Տերտերն ել պյուռվառ թալելու գյախ, վոր Զըլֆոյի մոտ կը խասնի, խոնարհութեն կանի Զըլֆոյին, պյուռվառ կը թալի, կասի.

— Զը՛լֆո, եսոր կիշեր քե խուր իմ,
Եսոր կիշեր քե խուր իմ։

Զըլֆոն ել խաչ կը խանի իրես, կ'ասի.

— Կ'ասես, կ'ասես, չես իգա,
Կ'ասես, կ'ասես, չես իգա.
Կակուղ ջլեր փոքր իմ,
Տախտն ավիլեր, խորտիր իմ,
Իրիկս կարիր ճամբխիր իմ,
Ջուխտ-ջուխտ խավեր տապկիր իմ,
Լոշն ու գաղեն թխիր իմ.
Կ'ասես, կ'ասես, չես ի գա։

Տերտեր պյուռվառմ' ել կը թալի, կ'ասի.

— Որհնյալ լինես առաջի անմահ գառին աստուծու։

Վոր ժամ կ'արցկվի, կը պռծնի, տերտերն ու Զըլֆոն մեյմեկու աչքով-ունքով կ'անին. վոր կ'երթան,

հաժա, գեղակիյհտեր թահմին կ'անին (զաթի առաճն ել կիտին յա), կը խասնին երկսին եվ՝ հա տուր, վոր կուտաս, գը՛մփա-գը՛ըմփ, խորոտ ըմ կը նղրեն, կ'ասեն.

— Ի՞նչխ եր, անո՞ւր եր սերն ու կարաք, տապկած խավեր. կնացեք, հա դե՛, կնացեք-կերեք։

Ա.Բ., № 89 (Վն.)

ՏԵՐՏԸՐՈՉ ԱՂՋԻԿ

Տերտըրոչ կնիկ կը մեռնի։ Տերտեր կառնի կընդան սոլեր, կը տանի քաղաք հըմեն կը ֆըռացուցի, կասի.

— Եսա սոլեր վիր վոտնով ելնի, յես են կառնիմ։ Իսկի մարթու վոտնով չելնե։ Կառնի իրիկուն փյորփյոշման կուգա տուն։

Քանիմ որ կընցընի, մեկ որ աղչիկ վոտ կը մըտուցի եսա սոլի մեչ։ Տերտըրոչ ախչըկա վոտի վերեն կելնի։ Կը տիսնա սոլն մեկ աղչըկա վոտնով, կասի.

— Ահա, յես պիտի քե առնիմ, աղչիկ։

Աղչիկ կասի.

— Ցա, ըտըսնա պան չելնե։

Տերտեր կասի.

— Ելնի, չելնի, սոլ քո վոտնովն ելավ, քե կառնիմ։

Աղչիկն եվ ճարահատ կասի.

— Աղեկ, վոր տու կուզես, յես եվ քե կառնիմ։

Թեր կերթա տուս, աղչիկ կը նստի, կուլա, կը մըռմռա, աստծուն կաղաչի, կինի պերայնսըվեր, կը քնի։

Երազի մեչ կուգան ինոր կասին.

— Առ քե խամար տան ավուր խաց-ճյուր, մըտի ճրախկալի մեչ—քո խոր ծեռնեն կը փոթընես։

Աղչիկ քընուց կակխի, կառնի ութ-տաս ավուր խաց-ճյուր, կելնի կը մտնի ճրախկըլի մեչ։

Իրիկուն խեր կուգա տուն, կը տիսնա աղչիկ չըկա։ Դյոր կը փտռի, չըկանա կընդրնե։ Կը միամտվի։ Կը մնա մեկ որ, բիրդան կինի միա, թե՝ ուրենց խին ճրախկալըմ կա, կասի.

— Առնեմ, տանեմ ետա ճրախկալ ծախեմ։

Թաքավրու լաճ են դեխեն կուգա, կասի.

— Հաքի իմ ոդի ճրաք քիչ ի, ետա մեյն ել առնիմ տանիմ։ Կառնի, վոր տանի տնի ուր ոդի մեչ։

Են մեկել առատուն, աշչին կերակուլ կը տանի Թաքավրու լաճուն։ Աղչիկ կիրիշկա ըսդեխ, ենդեխ, տեսավ, վոր մարթ չկա, կենի տյուս են կերակուլներ հրմեն կուտի, ելըմ կը փախնի, կ'երթա կը մտնի մեչ ճրախկըլին։

Թաքավրու լաճ կուգա, կը տիսնա, վոր ուր կեր կիրեր են, ծեն չի խանե։

Երկոր, իրեք որ ըսկընա կը տիսնա, կասի.

— Յա՛, ըսիլ ե, յես աշչու լակ կեր ուտողն եմ, մեյ կտոր շուռվա կը պիրի դնի իմ առաճ։

Կենի ջնոդ-ջնոդ կերթա դեխ աշչին, կասի.

— Ընչի՞ ըսկընա կանես, կերեր կուտես, լակեր կը պիրես դիկ։

Կասի.

— Թաքավրու լաճ, յես կերակուլներ կը պիրեմ կը դնեմ քո ոդի մեչ, կը թողնեմ կուգամ, վոր ըսկուն ի, ուտող քո ոդի մեչեն ի։ Դախտիկ տեղըմ պախկըվի, խենք վոմ ի կուգա քո կերեր կուտի։

Թաքավրու լաճ են մեկել որ կը մտնի թախտի իտև։ Աշչին կերեր կը պիրի կը դնի ոդեն, կը թողնի կերթա։

Թաքավրու լաճ կը տիսնա մեյ խա խուրնի-խրեն

դեն աղչիյմ ճրախկըլից կենի, կուգա կընստի վեր սեղնին։ Շատ ըմ կը խասնի աղչըկան կը պըռնի։ Կուրախնան վեր մեյմըկու, մեյտեղ կը նստեն, խաց, կերակուլ կուտեն։

Խաց կուտեն, կը պռծընեն, կառնի կերթա մոտ ուր խեր։ Ուր խոր կը պատմի ուր գլխու դացած, կ'ասի.

— Ետա աղչիկ պիտի փսակես վեր դի։

— Շատ աղեկ, կասի։

Խարսնիսի թաղարուք կանեն։ Լաճ կը փսակեն։

Տարիմ՝, երկու կընցընի վերեն, լաճ տըղեմ կենի ինոնց։

Տերտերն ել սալախով, սուլուխով կը խասկնա թե աղչիյն ելե մտե ճրախկալ, կընացե Թաքավրու տուն, ելե խարս։

Մեկ որ տերտեր կերթա Թաքավրու տուն, մըսաֆըր կենի, կիշեր գախտիկ կերթա Թաքավրու լաճու ոդեն, ուր աղչկա ջորեն չախուն կը խանի, աղչկա տղեն ուրուրոցի մեչ կը մորթի։ Կը տառնա արընթըթախ չախուն կը թալի աղչկա ջյոր, կը թոնի կերթա։

Առատուն կենեն տիսնան տղեն չի ակխե։ Մեր կերթա տղի երես կը պանա, կը տիսնա, վոր տղեն մորթուկ, գո ուրուրոցի մեչ։

Կենի, կը վազի մո Թաքավոր, ջուաբ կը տանի։ Թաքավորն ի, կենի դալալ կուտա կանչել, վոր վով գա, ասի թե՝ ուր թոռն ըսպանողը վով ի, ինոր խարիր վոսկի փարա կը խոստա։

Տերտեր կուգա, կասի.

— Թաքավոր ապրած, վիր ջոր արնոտ չախու կա, գո են ի մորթե։

Հըմենի ջյոր կաչկեն, կը տիսնան իսկի մարթում՝ ջեոր արնոտ չախու չըկա։

Տերտեր կասի.

— Եսա հրմենի ջյոբ աչկեցիր, դե մե խատ էլ քո խարսի ջյոբ աչկի։

Թաքավոր կաչկի խարսի ջյոբ, կը տիսնա արնոտ չախուն գո խարսի ջյոբ։

Կը թքի, կը մրի խարսին, լաճու խետ մեյտեղ տըղեն կուտան մոր գիրկ, տընեն կը մըլեն տուս խարսին։

Խարս տըղեն կառնի, կերթա մեյ խատ ավեր քյոլկի մեչ կը նստի։

Իրեք որ կիշեր ցերեկ կուլա, տղի մեչ խոգի կուգա, վրդ կը կպնի ուր տեղ։

Ժամանակըմ կընցընի վեր խսոր, մեկ որ Թաքավրու լաճու ավջիք սարից կուգան, շատ անոթի կելնեն, կասեն.

— Եսա լապզտրակ վոր տեղ իփենք, ուտենք, չում երթանք խասնինք տուն։

Կը տիսնան զատու պը՛ըտիկ լյուսըմ կերևա։ Կատ կանեն են լյուսուն կուգան։ Կուգան կը մտնեն ներս, կը տիսնան մեյ խա ջահել-ջիվան կընիյմ չորս տարեկան լաճ տըղեմ առաճ։

— Մորքուր, կասեն, կրակ ունե՞ս, մեյ խատ եսա միան իփենք ուտենք։

— Խա, կասի, տրեք ենա բուխուրիկի մեչ իփեք։

Կը տանեն վեր կրակին կիփեն։ Ինչըվա կանեն, կնիյ չերթա խետկեր ուտե։ Մեկ յան կը կիսեն, կուտան տղին։

Կելնեն ենտեղեն, կը թողնեն կերթան, կը խասնեն Թաքավրու լաճու մոտ, կասեն.

— Շահզադա, ֆըլան տեղ ըսնա կնիկըմ տեսանք, շատ խորոտ եր, քո վայել կնիկըմ եր, կընա առ։

Կասի. — Երթանք մեյ խա տիսնանք, խեմ։

Կելնեն մեյտեղ կերթան կնգան քյոլիկ։

Կնիկ կեմնա թե պիտի են որ ուր իրիկ գա են տեղ, ուր տղին կասի.

— Բալամ, եսոր մեր տուն խուր կուգա, վոր կուգան կը նստեն, տու հա ասա, մարե, ասա։

Թաքավրու լաճ ինան ավջիք կուգան կնգան տուն մըսաֆըր կելնեն։

Խետ վոր կը մտնեն ներս՝ կը նստեն, տղին կերթա կը նստի թաքավրու լաճու գոք, հա կասի.

— Մարե, ասա։

Շատ ըսկուն կասի, են էլ կասի.

— Ջանըմ եսա տըղեն ինչի՞ հա կասի՝ մարե, ասա, մարե, ասա։ Ասա հեմ ինչ ի կասես։

Մերն կը բաշլայի ուր խեքաթն ասել։

Թաքավրու լաճն ականջ կանի, կը տիսնա, վոր եսա ուր կնիյն ի, տղեն էլ ուր տղեն։

Կասի՝ չելնի՞ թե եսա զի չի ճանչընա։

Շոտըմ ուր կը խանի երևուս։

Կուրախնա վեր կընգան։ Կառնի խե տղին, կերթա ուր տուն, կը ճամխի տերտեր կը պիրի։

Կը թալի վառվան կրակի մեջ, կիրիցի, կառնի ուր կնիկ տըղեն, կը նստի։

ՅԵՊ. (Վն.)

ՎԱՐԴԱՊԵՏՆ ՈՒ ՄՈՆԹԸ

Վանքի նվիրակն ու մոնթը գեղրան կը զվռնեն, մատաղ ու պտղի կը ժողվեն։ Կերթան գեղ մե, վարդապետ խոնախ կեղնի ուր սիրողին։ Ոլոր որ ճամբա որ գելնեն, սիրող խուրջի մե լիք գաթա կը դնե հրտ վարդապետին։ Մոնթ զգաթեք կը կապե ուր ձիու թարքին, կերթան։ Մոնթ գուզե կտոր մե գաթա ուտե. ետ ապով կը ճնա յետ. վարդապետ կը կռահե։ Մոնթն որ գաթից կտոր մե կը դնե բերան, վարդապետ կը բռռա.

— Տիրացու, վերին գեղ վանքին քանի՞ մատաղ խոստ եկան։

Տիրացուն զգաթեն բերնեն կը հանե.

— Միտքս չե, հայր սուրբ, մոռցեր իմ, կասե։

Փշում լե կերթան։ Մոնթ որ գաթից բրդում մը կը դնե բերան՝ վարդապետ կը բռռա.

— Տիրացու։

— Համե, հայր սուրբ։

— Ներքին գեղ քանի կոտ ցորեն խոստ եկան։

— Զը՛մ գինա, մտահան երեր իմ, հայր սուրբ։

Դու կեցի, կասե մոնթ, վարդապետ, քու պընչներուց կը բերիմ...

Տաս-քսան որ զըվռնելուց յետո, մոնթն ու վարդապետ կիգան գիշնան սիրողի տուն։ Գիշեր որ կեղնի, վարդապետ կընկնա վրը չոքերուն — ափչալափի կերթա սիրողի հետ. տիրացուն կը բռռա.

— Հայր սուրբ, գինաս, նոր միտքս ի հընկավ. վերին գեղ քսան մատաղ խոստ եկան։ Վարդապետ կը փախնի մտնա ուր տեղ, զ՝որդան կը քաշե վրը գլխուն...

Քիչ յետև վարդապետն ելման կերթա։ Մոնթ կը բռռա.

— Հայր սուրբ, գինաս, ներքին գեղ 50 կոտ ցորեն պտղի պտի տան։ Վարդապետ ելման կը փախնի, մտնա ջլտակ... Հարամ-չարամ կեղնի վրեն։

Մոնթ կասե մըջ ուր մտքին. «Հը՛, հմլա պընչներուցդ ի կը բերիմ. չթողի՞ր գաթա ուտենք»։

ՍՄ., եջ 160—161 (Բլխ.)

Նմուշներ հայկական հակակրոն. Ժողկլարից—3

ՔԵՀԱՆ ՈՒ ԻՐԻՑԿԻՆԸ

Երզրումի քովի Գազտարիչ գյուղին տերտերը հովվեր կը Բաղտարիչ գեղին ժողովրդյան։ Բաղտարիչ գեղի քեհան սիրեր կը իրիցկնկանը։ Եղավ որ քեհին կնիկը մեռավ, կնիկը մեռավ, ատիկ վախտըմ բաքլայեց, որ տերտերն մեռնի՝ ինքը իրիցկնկանը առնե։ Տեսավ, որ տերտերը սև ձութ ե կուլ տվե, մե որըմ ըսաց իրիցկընկանը.

— Տերտերը չմեռավ, որ մենք իրար առնեյինք։ Իրիցկինն ա թե՝ դարդ մի ենե, աս որերս սուտ հիվանդ գըլլիմ, տերտերին կըսիմ կը թը՝ թակար մեռա, մե սնտուկմ՝ շինել տու, ինծի անոր մեջը դի, թաղե, վրաս ա քիչ հող լըլել տու, որ լալու գալածդ վախըթը արտասունքտ ինծի հանին սիրաս հովցնեն։ Թաղմանս դուն կուգաս տեսնիս կը թը ուր թաղեն կը, յետև գլշերը կուգաս ինծի հանես տանիս կը, իրար հետ կապրինք։

Քեհան խնալու գըլլի. իրիցկինը կերթա տուն, պառկի տքա կը. «Վայ կողքս, վայ գլուխս, մեռա»։ Տերտերն որ ժամեն կուգա տուն, իրիցկինը սուտ ժարիլ կենե, թլպիշ գըյնի վար։ Տերտերը ուշքի կը բերե, տեղու մեջ նստեցնե կը։ Կնիկը աչքերը քիչմ՝ բանա կը, կըսե.

— Գիտեմ պիտի մեռնիմ, մե սնտուկմ՝ շինել կուտաս, ինծի մեջը դնես, թաղես կը. վրաս ա քիչ հող

լըլել կուտաս, որ վրաս լալու եկած վախըթտ արցունքըտ ինծի հանի, սիրաս հովացնի։ Տերտերը գուլա կը։ Իրիցկինը աղըմ տքա, մեմա հոգին ավանդե կը։ Տերտերը սնտուկմ՝ շինել կուտա, իրիցկնկանը դնե կը մեջը, տանին թաղեն կը։ Քեհան կուգա մեռելտուն, հետները կերթա գերեզմինները, տեսնի կը ուրտեղ թաղեցին, գիշերը կերթա հանե, տանի կը։ Բանիմ՝ որ կանցնի, քեհան կուգա տերտերին կըսե թե՝ մե կնկանմ վրա սեր եմ ցրկե՝ ինծի պսակե։ Տերտերը կըսե՝ լավ գըլլի։ Քեհան իրիցկնկանը հետ կուգան կը։ Տերտերը անոնց պսակե կը, հըմը հեչ չի իմանա, քանի որ հարսին երեսը ծածկած ե. ինչդ ա իմանա, որ հարսը իրիցկինն ը։

Բանիմ՝ տարի կանցնի, իրիցկինը կուգա հաշակվի կը. ատ վախըթը տերտերը կըսե կը թը՝ որհնյալ ժողովուրդը, կեցիք՝ ասոր մե ավետարան մա կա։ Կառնե ավետարանը, կարդա կը, քեհան ու իրիցկինն ա դեմը կայնած են։

— Ժամանակոց մե քահանամ՝ կար, ատոր կինը հիվանդացավ, կտակեց, որ թակար ինքը մեռնի, մե սնտուկմ՝ շինել տան, իրեն մեջը դնեն ու թաղեն. վըրան ա քիչմ՝ հող լըլեն, որ տերտերը վրան լալու վախթը արցունքը իրեն հանի, սիրաը հովցընե։ Ատիկ մեռավ ի Գազտարիչ, հարյավ ի Բաղտարիչ։

ԽԺ., № 45 (Կրն.)

ՊԱՐՆԻԳԵՂՑԻ ՄՈՍՈՅԻ ՀԱՐՍՆԻՔԸ

Պարնիգեղցի Մոսոն, աստված ողորմի հոգուն, լավ չալղՋի յեր։ Գեղնա որմ՚ իրան չալղու թախտումով կերտա Փամբկու թարաքը հարսնիք չալելու։

Գեղանը կը պըտըտի, ուրան հմար չալղի կենե, հարսնիք գը չալե, գործն որ գը պըրծընե՝ գեղնա հընգերդանց հետ, որ դա տուն։ Գարնան դեմ կեղնի, անձրև, չամուռ. կերտան Փամբկու Պարնի գեղ, տեղմ՚ գըդնան քնին, որ լուսուն թեղ հընգնան ուրանց ճամպեն, երտան գեղ։ Դե եղ Պարնի գեղն ել, գինաք ելի, քար ու կռաբաշտի գեղ է, հայ քրիստոնի ֆուոտ չի դա, հարֆներն հուրման որ դուշ կեղնին կերտան, ներս չընառնի։ Հարֆընեռու իլաՋն որ գը կըռի, կըսին.

— Ախպեր, արեք երտանք մարակմ՚, բանմ՚ գըդնանք, գիշերը սրթըրվորինք, լուսուն կերտանք։

Կերտան, խարաբա մարակմ՚ կեղնի, կիսեն հեղ ծասկուկ, մեչն ել դարման. գեղնան դարմնի վրեն ուրանց գը նստին։ Գը նստին, մեկ ել գը տեսնան որ՝ աՀաճ, տերտերմ՚ ու հարսմ՚ ներս եգան։ Դու մըսի, սիրողուտենի համար է եգած։

Գը նստին՝ մեյվա-բան կուտեն, տերտերն կըսե.

— Հարս, դու ինձի ուրդեղ իս հաՀնի։

Հարսը կըսե թե՝

— Զատկին, որ ժամի բեմը կայնուգ եր, կըսեր՚ «Առեք կերեք», հոն հաՀնա։

Ես հաղ հարսն ել տերտերին գը հարցու թե՝

— Դու ինձի ուրդեղ իս հաՀնի։

Տերտերը կըսե թե՝

— Զատկի կանանչ-կարմիր կիրագին, որ կալերը պար գը խաղեր, թևերդ տնգեր եր ու գը շորորեր, հոն սիրդս դաղիր։

Տերտերը կըսե՝

— Ջանըմ, արի հիրար հետ փշում խաղանք, հետև մեր գուործը տեսնանք։

— Հա, կըսե հարսն ու գը վերու տերտերի թևը։

Եղոնք հմալ ուրանց գը խաղան ու եդ չալղՋեք ֆիծղալուց գը թուլնան։ Եդ Մոսոն գողդուց հընգերդանցը կըսե՝

— Տղեք, ըսմե չեղնի,—գինաս եդ անիծուկը շատ բամպառակ մարդ եր, հա, կըսե, արեք եղոնց հարսնիքը ծաղկցունք։

Եղիկ որ ըդման կըսե, ախպորս որ ըսիմ, հըմը գը վերուն դավուլ-զուռնեն ու գը չալեն։ Հմոր դաուլ-զուռնի ձենը գեղնա, հարսն ու տերտերը կառնին ուրանց փասա-փուսեն ու գը փախնին։ Սաբախտան գելնան, Մոսոն կըսե.

— Տղեք, յես բդի երտամ եդ անիծուկ տերտերից հարսնիքի հախն հուզիմ։

Հընգերդանը կըսին.

— Տո, ախպեր, ինչ դավի ունիս, մենք դարդ ու ցավի տեր ինք, արի մեր տներն երտանք։

Մոսոն կըսե.

— Ջե, որ չե։ Ու կերտա դիրա ժամի դուռը, գը տեսնա, որ տերտերը վռազ-վռազ ժամի դուռը գը բանա, գը մոտենա, կըսե՝

— «Որշնա ի տեր»։

Տերտերը կըսե.

— Աստված որշնե, ի՞նչ կա, որշնած։

Կըսե.

— Տերտեր ջան, են քանի գոռշը չըս իդա։

— Ի՞նչ գոռշ, որշնած։

— Դե՛, տերտեր ջան, գիշերը խարաբա մարկի մեջ քու հարսնիքը չերի՞նք։

Տերտերի լեզուն կապ գընգընա, գը հասկընա ելի, կըսե՝

— Որշնած, ա՛ռ ես քզի, հըմը մարդու բան չըսես, ու հինգ մանեթ գը դնե բուռը։ Մոսոն ել, եդ անիծուկը, տերտերի յախեցեն պոկ չի գա, կըսե.

— Տերտեր ջան, գը են հարսի տունն ել խրատ տուր։

Խեղջ տերտերը ճարն որ գը կըդռի, կըսե.

— Ե՛յ, են չարդըխով տունն է։

Կերտա գը տեսնա, որ հարսն ել վռազ-վռազ դռներ կավլե, կըսե.

— Հարս ջան, են քանիմ՞ կապեկը տաս՝ երտանք, ճամպուց յետ հընդանք։

Հարսը կըսե.

— Ի՞նչ քանիմ՞ կապեկ։

Մոսոն կըսե.

— Քուրիկ, ախբը քու ու տերտերի հարսնիքը մենք չալեցինք գիշերը։

Հարսը գուն գիտա, գուն կառնե, գը տեսնա, որ ես մարդը իրանից վազ չի գա, ճագդինը գը կըտռե, ոսկիմ՞ կիտա, տնեն ել դոջա բոխճեմ՞ հաց կը փատտե, գիտա ու կըսե.

— Ախպեր ջան, վռուտա պագիմ, մարդու բան չըսես, քու տունն եղնիմ։

Ես Մոսոն գեղնա, գիգա հընկերդանց քովը։

— Տեսաք, տղեք, գացի համ տերտերից, համ ել հարսից հարսնքի փարեն բերի։

— Վա՛յ Մոսո, քու հարեը չմեռնի, — կըսին ու գընգընան ճամպա[1]։

(Լն.)

[1] Սույն պատմվածքը, մեր խնդրանքով, գրի յե առել ընկ. Յե. Թորոսյանը։

ԳՈՂ ՏԵՐՏԵՐԸ

Տերտեր կերթա Արճշու կողմեր ժողովք ենելու։ Գիշեր պառվու մը խոնախ կեղնի, աչք գընկնա պառվու ի ծվան։ Հառջի աղոթըրնին զպառվու վեց եծ լե կը գողնա, կը տանե Վան, կը ծախե։ Տիրացուն գիտնա տերտերոջ գողութեն, ձեն չենե, հարի տերտեր կը դառնա գիկա կը հանի ծննդյան տոնին։

Տոնի գիշեր ժողովուրդ լիք կեղնի ժամու մեջ։ Տիրացուն մեկ դասեն՝ «Ուրախացի սրբուհի» շարակնի տեղակ կերգե.

«Ուրախացիր, գայլ երէց,
Այն գողունի վեց այծիւք՝
Զոր ի յԱրճէշ գողացար,
Տարեալ ի Վան ծախեցիր,
Տէր աստված, հարցըն մերոց»...

«Գող՝ սիրտը գող». տերտերոջ խատուտ կը կոտրի, կը հարմարցու՝ են մեկել դասեն կերգե.

«Տո՛, տիրացու սեբես,
Ջ'ըլնի մարդու բան ասես,
Կեան ընձի, կեսը քեզ,
Տէր աստված, հարցըն մերոց»...

Պառվըներ զսիրտ ուրանց կը տվեն ու կասեն.

— Ո՛ւն, մեղայ աստծու, ու վիրա կը կղեն ու գելնեն, խաչ կը հանեն...

Ժամուց հելան, տերտերն ու տիրացուն այծերու վարեն բաժնեցին վըր իրարու։

ՍՄ., եջ 74 (Բլխ.)

ԱԳԱՀ ՏԵՐՏԵՐ

Ձեն ցրվեր եր յերկրոց յերկիր, թե՝ Ֆլան քաղաք տերտեր մը կա, պատարագ որ կենե, «Վողջումի» ժամանակ ժամու բակի ծառերն հրմեն կը փաթվին իրար, «Վողջում» կիտան իրարու...

Զանգին մարդ մը խուրջի մը ոսկի կը բառնա վրը ջորուն, կերթա, որ զեղ հրաշք տեսնա։ Թե արժընիկ եղներ եդ հրաշք տեսնելու, զխուրջի ոսկին պտի տեր տերտրոջ։ Կերթա։

Տերտեր գիմնա, որ զանգին խուրջիմ՝ ոսկի և բերի, որ զուր հրաշք տեսնա։ Պատարագ կենե։ «Վողջումի» ժամանակ զանգին գեղնա ժամու բակ կը կանի. չէ, ծառեր «վողջում» չըն իտա իրարու։

— Տերտեր, կասե, ծառերն հորին «վողջում» չըտրվին։

— Ոռնած, կըսե տերտեր, պատարագին իմ ուշքն ու միտք են եր, թե՝ զանգին վոր զխուրջի ոսկին պտի տա, ջորին լե հետն ե՝ թե չե։

ՍՄ., եջ 72 (Բլխ.)

ԽՈՍՏՈՎԱՆԱՇԱՅՐԸ

Վանա՝ Կալջոնց Գեվորք-բեյի կնիկ՝ Ամբար խաթուն, կնաց մո Թաղադյուլենց տ. Մանել տերտեր, խոստովանավ, ասաց.

— Տեր հայր, ճոչ պախսին պախս կիրեր եմ մեյ տիր։

Տերտեր պարկացավ, ասաց.

— Ծո, չոռն ուտես, ծո, ցավն ուտես, անիծած, չե՞ս ամչընա։

Տերտերն ալա չեր ճանչրցե, թե վով եր խոստովանող կնիկ։

Ամբար խաթուն ասաց.

— Ի՞նչխ անի, տեր հայր, Գեվորք-բեյ դավաթ արաց, փաշին, կադուն իպե տուն։ Կեր իփիցի, խամտես արի, պախսս կերա։

Տերտեր վոր իմցավ՝ խոստովանող կնիկն վով եր, ասաց.

— Ավար, Ամբար խաթուն, տո՛ւ ես, անո՛ւշ ուտես, անո՛ւշ ուտես... աստված թողություն շնորհեսցե։

ՍՇ. (Վն.)

ԳՈՂ ՎԱՐԴԱՊԵՏ

Վարդապետ ուր սպասավոր կինեն ճամբախ, կերթան։ Շատ կերթան, քիչ կերթան, կը խանեն մե գեղըմ։ Դոր երթանք կիշեր ելնենք մըսաֆըր, դոր չերթանք։ Կնացին մե պառվում՝ տուն, ասին.

— Մայրիկ, մե չե՞ս ընթունե, կիշեր ելնենք քե խուր։

Ասաց.

— Խուրն ասածու խուրն ի. ինչի՞ չեմ ուզե. վեր իմ գլխուն, վեր իմ աչիչ։

Իրիկուն պառավ ինոնց պատիվ պախելու խամար, կիրիցուց, խմցուց, ինոնց տեղ-տուն շինեց, ինքն էլ վեր տռան պառկավ։

Քնելու կյաին եր, վոր պիտի, «Եկեցի» անին, քնին, վարդապետ ուր սպասավոր ելան կայնան վեր վոտաց, ասին՝ «Եկեցի» անենք, պառկենք քընենք։

Վարդապետ իրիշկաց դեխ վեր, տեսավ, վոր մե Ջանդակ վոչխարի միս առքեն կախուկ ի, ասաց.

— Եկեցի ի վերա միս կա կախ, ձեռ թալ ինե, քաշի պե տակ։

Պառավ էլ կիտի, թե աղորթմանց «Եկեցի» կանեն, գյուռ աղորթք կանի, կը կըզվի, կը շիտկվի, մե թարաֆից էլ իրես խաչ կը խանի։ «Անուն հոր և որթվո»... Մե թարաֆեն էլ գլխու կինի նոր, վոր վարդապըտի մեքեն ավիրեր ի՝ պիտի միմն գողնա, տանի։

Մեչ ուր սըռտին գախտիկ կասի.

— Ցես քե մեղա, տեր աստված, տու զիկ աղատես ի ձեռն գողերաց։

Սպասավորն կասի.

— Իմ ծեռ չը խասնի։

Վարդապետն կասի.

— Քարմ՝ տիր տակ, վոր թա խասնի։

Կասի.

— Վարդապետ, վարդապետ, շատ էլ վեր ի, շատ էլ պանցը ի։

Կասի.

— Կոճմ՝ էլ տիր տակ, վոր պանցրանա, շոտ խասանի։

Սպասավորն ի-կոճ կը տնի վոտներաց տակ, կը պանցրանա, միս կը կտրի, կպիրի տակ։ Ամա պառավ իսկի ծեն չը խանե, կասի.

— Ինոնց քեֆ, ինչ վոր կուզեն թող անեն, յես իմ պան ինոնցից աղեկ կիտեմ, թե վոր ինոնք աղվեսն են, յես ինոնց պոչն եմ։

Վարդապետ ինան սպասավոր միս կը տնեն մեչ ուրենց ջըվլին, պերան կը կարեն, կը կապեն կը տնեն ուրենց գլխուն, կը պառկեն, կը քնեն։ Վոր կը քնեն, կիշեր պառավ կուգա գախտիկ միս ջըվլից կը խանի, քանիմ՝ խատ կոճ, քանիմ՝ խատ փթիր կը տնի մեչ ջըվլին, ինոնց պես ջըվլի պերան ելմ՝ էլ կը կարի, կը տնի ինոնց գլխուն, միս կը տանի պախի, կերթա։ Կերթա նոր խանգիստ կը պառկի, կը քնի։

Կը մնա չում առատուն, վարդապետ շոտ կակիսի, սպասավորին կը զընթի.

— Շատ ելի երթանք, քանի պառավ չակիսեր ի,

սորա միս մեր ծեռնեն կառնի. կիշրով թողնենք, երթանք։

Կելնեն, կառնեն ջըվալ, կելնեն տուս։ Պառավ կասի.

— Հայը սուրվի, տատրեք բարեմ՝ խորոտ լուսնա, կտորմ՝ խաց, կերակուր հաղրեմ կերեք, նոր կնացեք, աջալուց ինչ կա, վոր կիշրով կերթաք։

Վարդապետն ել կասի.

— Շնորհակալ ենք, մենք շատ պիտի երթանք, վոր խասնենք մեր տեղ։

Պառավն ել կասի.

— Եսա մսի խամարն ի կերթան, վոր յես չիմնամ։ Ինոնք ել կիտեն, թե յես միսն թողեր եմ դան ինոնց խամար։

Կաց-պարով կանեն պառվուն, շնորհակալ կելնեն, կը թողնեն կերթան։

Ճամբաս սպասավոր վոր ջըվալ կը շկի, շատ կերթան, քիչ կերթան, կասի.

— Հայը սուրվի, եսա միս իմ քամակ շատ կը ճլթի, կը ցավցուցի, ինչկանդար սըրուխ ուսկոռ կա մեչ եսա մսին, իմ քամակ ըիթուն վեր զի ծակռանց։

Վարդապետն ել կասի.

— Պան չկա, աղոթրան գյո դյախն ի պացվի, կանենք քյաբաբ՝ կուտենք, պեռ կը թեթվանա։

Քիչմ՝ ել կնացին, աղոթրան ճողեր իթալ, նըստան, ասին.

— Կտորմ՝ քյաբաբ շինենք, ուտենք երթանք, անոթի յենք։

Սպասավոր շլայն առեց տակ, պերան քակիցին, տեսան վոր մսի տեղ՝ փթիր ինան կոճեր մեչ ջըվլին։

Ասին.

— Վայ պառավ, ասված քյո տուն ավիրեր, ընա յել պան կելներ։

Վարդապետն ասաց.

— Ծո, եսա ի՞նչ գյախ ի իկե միսն տարե, կոճ, փթիր լցե տեղ, վոր մենք չենք իմցե։

Սպասավորն ել ասաց.

— Տո ջանմ, յես կիտեմ, վոր իմ քամակ կը ծայծրկեր, յես ասի՝ եսա մսի պան չեր։

Վարդապետն ասաց.

— Ե՜հ, մկա ինչ անենք, քյաբաբի տեղ փթիր կըռծենք։

Ասին, եկան ինդյան ճամբաս...

ՅԵՊ. № 392 (Վն.)

ԵՋՄԻԱԾՆԻ ԳՈՂ ՎԱՐԴԱՊԵՏ

Եջմիածնա վանքի մեջ մեկ վարդապետըմ կեր, ընցկոն զինք արդար շանց կը տեր խըլղին, ծոմ-պաս կը պահեր, ինչ կանդար զանգեր հիրար տեն, ժամ կը վազեր։

Ենպես կերևեր միապանի աչիչ, համ գեղացոց աչիչ, թե՝ զինք սուրփ ա։

Ուր փոքրավորն ել սըլվըլուն, չար, ճարպիկ մարթմ՝ եր։

Որըմ վարդապետ գնաց մըտ կաթակոս խնդրեց, ասաց.

— Շողակաթի ժամու մոտ պատիկ հողեմ՝ կա, տվեք ձի, յես երթամ ենտեղ նստեմ։

Առեց ուր փոքրավոր, գընաց ենտեղ նստավ, ջոկ։ Ու հողից չըր ելնե տուս, մարդամեչ չըր մտնե։

Գո նստան եռա տեղ, վարդապետ փոքրավորին գիտի, փոքրավոր վարդապետին գիտի։

Փոքրավոր որական երկու խավ, որական իրեք խավ գեղից կը պռներ, կը պերեր, կը կարմրցուցեն, կ'ուտին։ Զուր չորս ու խինդ ամիս վերեն ընցավ, գեղի խավերու փաթն եկավ։

Ելավ, զրոց ինկավ դարբար, համեն գիտեն թե գեղի խավեր կը պակսեն, մարթ չը գիտի գողն վոմ ա։

Գեղի մեչն ել թի ճիժըմ վախենա, խիվանդըմ ելնի, կը տանեն եռա վարդապետի մոտ, տուռ չը պանա մարթ զինք տեսնա, տռան յետևուց կ'աղոթա, ըղխիվընդներուն կը ժրեցուցա։

Կնիկըմ կը դողցուցա. ավուր մեկին երկու կնիկ կառնեն զեն կերթան Շողակաթ։ Երկուսն կը պառկին գերեզմներու դեխ, վըր քարիմ, մեկըն կառնի պամբկե թել՝ կերթա մըտ վարդապետ, վոր գող տա կտրել։

Եռա երկու կնիկ են մեկ քարի տակ փառ կը տեսնան, ծեռ կը տա փառ կը քաշա, թևակախ կելնի տուս։ Քիչըմ մատով կը պճկորա, ել փառ կելնի տուս, ել խավու գլուխ, խավու վոտքեր, հլին։ Համա խող կը տան վերեն պամ՝ չըն ասե, կը տառնան գեղ։

Կը գան, նարուն-նարուն կըսա կենին, թի ընցկընա պամ՝ տեսանք։

Զեն ինգավ մըչ գեղին, ասին.

— Թախուժով երթանք աչքենք։

Գացին ենտեղ փորեցին, տեսնան ինչ։ Գեղ ինչ կանդար խավ վոր կուրուսե, փուռթկներ գո եղատեղ։

Ըհա, կասեն, արդար վարդապետի ճգնավորութեն գո ընցկընա յա։

Կերթան զոռով ըղվարդապետ հողից կը քաշեն, կը խանեն տուս, տեսնան ի՞նչ, վիզ ելե խընձ դոմիմ սուն։

Առին ըղվարդապետ ուր փոքրավորով, տվելեն, շիելեն, քաշքշեցին մըտ կաթակոս։

Կաթակոս ուր եպիսկոպոսներով թափան եռա տեղ։

Կաթակոս ասաց.

— Մեր նամուսին չը կպավ եսա։ տարեք երկուսն ել թալեք Զանգուա գետ։

Նամուշներ հայկական հակակրոն. Ժողովրդից—4

Վարդապետ փոքրավորին կասա.

— Պրծանք, ճարմ՝ կանաս կընդնես, ըզմե ազատես, իմ ծեռնեն թու պան չի կա։

Փոքրավոր ուր քաղցր ձեն եթող, կանչեց.

«Քեզ կ՝աղաչեմ, սուրբ Հայրապետ,
Զիս պռնած իմ վարդապետ խետ,
Ծեծելեն, տփելեն կը տանին՝
Թալին Զանգուա գետ։
Քեզ կ՝աղաչեմ, սուրբ Հայրապետ,
Զիս ազատես, իմ վարդապետ խետ»։

Կաթակոսին ժաղը եկավ վարդապետի արած խայտառակութեն, ասաց։

— Տարցուցեք, պերեք։

Վարդապետ տարցուցին պերին, կաթակոս խավերու տերերու սիռտ ռազի երաց, վարդապետ ուր փոքրավորով երողկեց զատն վանքըմ, վոր ապաշխարեն, ծոմ-պաս պռնեն։

ԱԲ. № 551 (Ռշտ.)

ԱՆԿՇՏՈՒՄ ՏԵՐՏԵՐ

Տերտերըմ կիլնի, շատ անկշտում կիլնի. հինգ հարիր տուն կթեմե, ախըր չկըշտանա, կասե.

— Եդա հըվլա չեղնի. յես պիտի հելնիմ երթամ Իստանպոլ, պատրիարքից կոնդակըմ առնիմ հիգամ, հընկնիմ ընծիկ ճարընկնուրթեն ենիմ։

Ճամբեն մե տիրացու՝ կը պատահե, կասի.

— Տերտեր, զի չը՞ ենի քզիկ տիրացու, տանի քու հետ։

Տերտերկասի.

— Հորի՞ չըմ ենի։

Կենե ուրին աշկերտ ու կառնե հետ կերթա։ Կերթան քիչըմ տեխ, տիրացուն կասե.

— Տերտեր, խուրբան իլնիմ քզիկ, զիմ հակուբեն առ քու մոտ, երթամ քիչըմ դուրս հելնիմ ու հիգամ։

Տերտեր կառնե. տիրացուն կերթա, կնստի փըշրըլիմ տակ ու կդառնա կիգա, մընհանա կենե։ Որ կը դառնա կիգա, կհասնի, կասե.

— Տերտեր, դու դադրար, զհակուբեն տուր իմ մոտ։

Հակուբեն կառնե տերտրոջ մոտեն, կընկնին ճամբախ ու կիգան. կիգան քիչմ դեխ, հախբրիմ հրատատ կիգան, կնստեն, որ լոդմեմ հաց ուտին։

Որ կը նստեն վըր հացին, տիրացուն զհակուբեն

կը բանա, կը տեսնա, որ ուր հակուրի մեջ իրեք գա-
թա եր, Ինացեր ե երկու հատ, կասի.

— Զեղնի՞ զմեկել գաթեն դու ես կիրի։

Տերտեր կասե.

— Զե, իմ կարգ վկա, յես խաբար չունիմ։

— Զկերեր իս, չկերեր իս, եկո հաց ուտինք, հել-
նինք երթանք։

Կը նստին ուրանց հաց կուտին ու կելնին կընկ-
նին ճամբան կերթան։

Կերթան հրատատ կիգան գետիմ՝. տիրացուն խաչ
խընեց, ընցավ ջրի ենդին։ Տերտեր Ինաց եատգեն. հա-
նեց զուր հալվընները, կապեց վրը գըլխուն ու ընցավ։

Գնաց գետի հորթոլախ. ջուր թալեց բերան. տե-
սավ, որ կխեղդվի, ասեց.

— Տիրացու, եկո, յես խեղդըվա։

Տիրացուն ասեց.

— Ասե տեսնամ՝ գաթի ուտողն վոՀրն ե, որ հիգամ
ազատեմ։

Տերտերն ջրի հորթոլախ ասեց.

— Վալայի, յես չըմ կերերի։

Տիրացուն տեսավ, որ ինքյար կենե, թողե լե կը
խեղդվի, ասաց.

— Նալաթ հիգա չար սատանին. գնաց, բռնեց
ձեռքեն, առավ եկավ։

Հելան հընկան ուրանց ճամբու հետ ու գացին-
գացին, Իստանպոլ հելան դուրս։

Գացին որ Իստանպոլ հելան դուրս, եդ յերկրի
թաքավորի տղեն լե հիվանդ եր, հընկուկ եր ոլում
դոշակին. թալալ տվեր եր կանչել—վորն որ զթաքա-
վորի տղեն սաղցու, ուր կշռանքով ոսկի կիտա թա-
քավոր ուրեն։

Տիրացուն լսեց, ասեց.

— Տերտեր, գինաՀս, յես լոխման եմ։

Տերտեր որ լսեց զետի, ասեց.

— Կելնի՞, որ եդ մարդ զիս խաբե, հերթա սաղցու
զթաքավորի տղեն, առնե զփարեն ու հերթա։ Ասեց,
կանի՝ հարցում տեսնամ իմաՀ կը սաղցու, ինչ դեղ կե-
նե, յես հերթամ սաղցում, առնեմ զփարեն ընծիկ։

Հարցուց, ասեց.

— Տիրացու, իմաՀ կը սաղցուս։

Տիրացուն ճեպեն չախում հանեց, ասեց.

— Կերթամ դամարըմ կա ենդոր ձեռքի վրեն,
կը կարիմ, արուն կհանիմ, զեդա բամբակ լե կը դնեմ
վրեն, կը սաղնա։

Տերտերն ասեց.

— Լաո, հըմկա դադրուկ ես, քելե երթանք խան,
հոդեմ գտնանք, քիչըմ զքու գլուխ նուՀըմ առ, սորա
հելի գնա։

Գացին, տիրացուն պառկավ քնավ։ Որ պառկավ
քնավ, տերտեր ասեց.

— Հըմին-հըմին ընծիկ թարիՀ երեց, յես սորվա,
կանի՝ հելնիմ հանեմ եդոր ճեպեն զչախուն ու զբամ-
բակ հերթամ սաղցում, առնեմ զփարեն ինծիկ։

Հելավ առավ զչախուն ու զբամբակ, գնաց կանավ
թաքավորի սարի դուռ։ Հարցուցին, ասին.

— Բարեկամ, դու ինչ ես։

Ասեց.

— Լոխման իմ, եկեր իմ զքու տղեն սաղցում։

— Հայդե, հրաման ե քզիկ, որ սաղցուս զիմ
տղեն՝ ինչ որ քու լեզուն շուռ կիգա, կիտամ։

Կերթա տղի պառկած հոդեն, տիրացուի ցուցու-

ցած տամբից արուն կառնե։ Որ արուն կառնե, տղեն կբանա զբերան ու կը խփու։

Որ կը բանա զբերան ու կը խփու, կերթան թաքավորին կասեն.

— Ըպա չասես, տերտեր զքու տղեն սպանեց։

Կասե.

— Շուտ հասեք, որ չփախնի, վերցուցեք, տարեք զգլուխ կտրեք։

Կիգան որ տանին խեղդին. տիրացուն կիմանա, կելնի ու կվազե։ Կիգա, կը տեսնա, որ շերիտ սապոնած են, կեձգեն վիզ, որ խեղդին։

Կասի.

— Տերտեր, զգաթի ուտողն ասե՝ զքզիկ ազատեմ եղա կապի դռնեն։

Կասե.

— Որհնած, իմ կարդ վկա, յես խաբար չունիմ։

Կը տեսնա, որ ջիպ ինքյար կենե, զձեռք քսիր ե պատ, կասե.

— Մեկ լե նալաթ հիգա սատանին, ու զինք կը թալե վեր ջալատչոց ոտուց թե՝ եդի իմ հերն ե, մըսպանեք, սահաթիմ մեջ կը սաղցում թաքավորի տղեն, հանիմ կանկըցում վեր ուր ոտաց։

Կերթան թաքավորին կասեն։

Կասե.

— Գացեք, առեք ու եկեք։

Կիգան կառնին, կերթան կը տանին տղի հոդեն, կը սաղցնե, տղեն կելնի թիկ կնստի։

Կերթան թաքավորին կասեն.

— Քու տղեն հելավ նստավ, իրիցու տղեն սաղցուց, հանեց կանկցուց վըր ուր ոտաց։

Կասե.

— Գացեք առեք զիրիցու տղեն ու եկեք։

Կիգան, կառնին զիրիցու տղեն, կերթան։

Թաքավորն կասե.

— Ջավակս, դը հուզե՝ իտամ։

Տիրացուն կասե.

— Կուզիմ որ իտաս մեկ ձի ինծիկ, մեկ իմ հոր, մեկ ձին լե ոսկի բառնաս իտաս։

Թաքավորը հրաման կենե, կերթան կառնեն կիգան, կիտան տերտրոջ տղին։

Որ կիտան, տերտեր կասե.

— Զմբը փնտռած գտանք, եկո հեծի զքու ձին, դառնանք երթանք մըր տուն։

Կըհեծնին, ձիմ՝ տերտեր, մեկ՝ տիրացուն, մե լե կբառնան զուրանց ոսկիք ու կընկնին ճամբա կիգան։

Կիգան կը հասնին ենդեխ, որ ինք ու տերտեր եկած հասած են հիրար, յեղած են հընկեր։

Որ կիգան կը հասնին եդդեխ, տիրացուն կասե.

— Տերտեր, եկո զմբը փարեք կիսինք, յես կերթամ իմ տուն, դու լե գնա քու տուն։

Տերտեր կասե.

— Հա, որհնած, թը՛ղ եղնի։

Կիջուն զբեռ, կը գնեն գետին։

Տիրացուն կը բանա զբեռան բերան, կը բերե կենե իրեք հիսա։

Տերտեր կը մտածե ինքն ուրեն, կասե.

— Վալայի, եդի զփարեն կենե իրեք հիսա, զերդու հիսեն կառնե ուրեն, մեկ հիսեն կիտա ընծիկ։

Իրեք հիսա որ կենե կը խըլբսի, տիրացուն կասե.

— Տերտեր, եղա մեկ հիաեն քզիկ, մեկ գաթի ուտողին, մեկ լե ընծիկ։

Տերտեր կասե.

— Որհնած, զիմ մեղք ալեն ի կասիմ, զգաթեն յես իմ կերի։

Տիրացուն կասե.

— Որ դու կերեր իս, որ կը հարցուցնեյի հոբի չեր ասեր։

Տերտեր կը լալնա, կմնա։

Տիրացուն կասե.

— Դե, վերցու զըմեն առ ու գնա քզիկ. բըլե դու հուրնե չպիտի խերիս։

ՆՄ. № 24 (Մշ.)

* * *

Կին մի ի տուն կոչելով հանդուցյալ Հ. քահանայն, ի Կ. Պոլիս կամ այլուր գտնվող ամուսնուն կամ ազգականին նամակ մը գրել կուտա։ Յերբ կը լրանա նամակն, կըսե.

— Շնորհակալ եմ, տեր պապա, աչքդ լուս, ձեռքդ դալար։

Տեր հայրն տեսնելով, վոր որհնությամբ միայն կը վարձատրե՝ կըսե.

— Ո՛րհնած, աչքդ քեորնա, ձեռքդ չորնա ըսե, ու 40 փարա տուր։

ՀԱ., եջ 202 (Ակն.)

ԵՐԹԱՄ ՏՐԱՊԻԶՈՆ

Կելնի-չելնի աղքատ մարթմ՝ ուր կնիկ։ Են մարթ ինչ կանդար, վոր տարին տըսվերկու ամիս կ՚աշխատի, ուր իդարեն չ՚ելնի։ Ավուր մեկ ուր միտք կավիրի, կասի.«Բոզ ի, թոնեմ երթամ ուրիշ յերկիրներ, բալ-քիմ իմ իդարեն ելնի»։

Ուր կնկան ծեռ կը պըռնի, կասի.

Կնի՛կ, քելի երթանք, բալքի տեղմ՝ աստված մե կըսմաթմ՝ տա, մենք ապրենք։

— Կելնեն կինեն ճամբախ, շատ կերթան թե քիչ, գեղիմ ռաստ կուգան։

Կասի.

— Կնիկ, երթանք ետա գեղ քնինք, չուր առատ-վան ելնինք, երթանք։

Են մարթն ել մուրուսով եր։ Ետ կը մտնի մեչ գեղին, գեղակահաեր, վոր կը տիսնան ետա մարթ, մու-րուս իկե փուվ վեր սրռտին, կը կիտնան թե տերտեր ի, կուգան կասեն.

— Տու տերտե՞ր ես։

Կասի.

— Ես։

Կասեն.

— Դե վոր ըսկունի ի, մեր գեղին տերտեր չկա, արե ելի տերտեր։

Կասի.

— Շատ աղեկ։

Կը մնա իրիկուն, քնելու գախ կնիկ կասի.

— Ծո մարթ, տու չում այսի, փեմ, քիմն ել չես կիտե, ինչիս վոր քե խառդուցին՝ տու տերտե՞ր ես, տու ասիր՝ խա, յես տերտեր եմ։ Հայդե տերտեր, տերտեր, վոր վաղ երթաս ժամ, ինչ պիտի ասես։

Են ել կասի.

— Կնիկ, ախբը պամ՝ կանենք, կընցուցենք։

Առատուն կելնի, կերթա ժամ, ժամ կոխնի, ժողո-վուրթ կուգա կը լցվի ժամ, աղոթք կանեն։ Տերտերոչ ասածն ել ետա մեկ խաբարն ի՝ հա կասի.

«Երթամ Տրապիզոն,
Գամ Տրապիզոն,
Երթամ Տրապիզոն,
Գամ Տրապիզոն...»

Ժողովուրթն ել միամիտ ելնելով, չեն կիտե ինչ բաս ի, ինչ կասի, կամ ինչ պիտի ասի։

Մեռել թաղի, կնունք անի, պատարաք անի, փսակ անի, հա ետ մեկ խաբարն ի.

«Երթամ Տրապիզոն,
Գամ Տրապիզոն...»

Ավուր մեկ, են գեղի ըռես կը մեռնի, վոր հարուստ, յերևելի մարթմ՝ եր։ Ժողովուրթն ել տերտերոչ կասի.

Առատուն ըռեսի խամար պատարաքմ՝ պիտի անես։

Առատուն պատարաք կանի, կը պոծնի, կուգա ըռեսի կարք կատարելու գյախ, վոր պիտի ըռեսի կարք կատարեն, տերտերն ի կը մտածի, կասի.

«Ըռես քանի վոր հարուստ մարթ ի, պատվավոր ի, ինոր պետք ի ետոր խոսքմ՝ ավել ասեմ, վոր խորոտ թառադուխով ելնի։

Զում ենոր վոր կասեր.

«Երթամ Տրապիզոն,
Գամ Տրապիզոն,
Երթամ Տրապիզոն,
Գամ Տրապիզոն»։

Համա եսոր կասի.

«Երթամ Տրապիզոն գամ,
Երթամ Սամսոն գամ...»

Ժողովուրթ, վոր կը լսեն՝ տերտեր վեր ըռեսին խոսքմ՝ ավել կասի, սաստիկ կը պարկանան, թե՝ մեր մեռելները, վոր ախքատին՝ կառճ կասեր, պատարաքն ել կառճ կասեր, հմեն պան ել կառճ կասեր, համա եսոր, վոր հարուստ ըռեսն եր, վոր մեռիր եր, պատարաքն ել երկեն արաց, կարքն ել երկեն արաց, դեմաք եսա տերտեր աճառուԹյամբ իրար կը տեպնի, զանգին ախքատ կանի, վոր ախքատին կառճ կասի, զանգընին պամ՝ կավելցուցի, վոր ըսկուն ի, եսա տերտերոչ մուրուստուս տանք, խանենք տուս երթա։

Խոսքեր կանեն մեկ, խեղճ տերտերոչ մուրուսից կը պըռնին, կուտան առճև փետի, տերտերոչ մուրուս բիԹուն կը փիտեն, տերտերոչն ե լխորոտ կը ճարտեն, ինչ կանդար ել առծաթ-վոսկի ավիր էն, մոտեն կառնեն, անոթի, ծարավ գեղից կը խանեն տուս, կ'երթա։

Ճամբա կնիկ կասի.

— Աստված քո տուն ավիրի, տու խանգիստ ղուհաթ կերթիր Տրապիզոն կուգիր, քո դավին ինչ եր խետ Սամսոնա, Սամսոն վերեն ավելցուցիր, մեր տունտեղ վեր մե ավիրցիր, ջեորով ինք մեր տեղ կընդե, կտորմ՝ խորոտ կապրինք։

Հա տրուտընջացին, հա ինգան ճամբա կնացին, ել ուրենց կամաթ չը կնդան...

ՅԵՊ. № 393 (Վն.)

ՍՈՒԹ ՏԵՐՏԵՐ

Մարթըմ կուգա գեղիմ մեչ տերտերուԹեն անելու։ Ամա գեղակիհտեր ինոր ժամ-պատարաք անել հեչ չեն տիսնա։ Ինչ գախ, վոր ժողովուրթ ժամ կը մտներ, տերտերն՝ գոյա ժամ ասե, պոծե—«Որհնյալ յեղերուք» կասեր, ճամխու կը տներ մարթերաց։

Մարթու մեկ որըմ ուր ինգըրնեկաց կասի.

— Յես ժամու ասմունքից կը խասկընամ, մեր տերտեր փորձալու խամար, կենեմ սուԹ մեռել գի տարեհ տրեհ ժամ, խեմ տերտերն մեռելի կարք ինչըվ պիտի կատարի։

Մարթուն ինգըրներ կը տնեն նաշ, կառնեն տանեն ժամ։ Կիշեր տերտեր կուգա, վոր մեռելի կարք կատարի։

Գուտուկմ իլին փթրի կրակ կը լցի, խունկ կը տնի մեչ, կայնի մեռելի վոտաց կողմ, պուռվըրի պես պուտուկն իրար կուտա, մեյ գեխեն ել կասի.

Երթամ Սամսոն,
Գամ Տրապիզոն,
Ալելույա։

Վոտաց գեխից կերթա գլխու կողմ.

Կնացինք Անապատ,
Կերանք կուշտ կանափատ,
Ոխնած, խող ես, խող տաուցի,
Անշարժ յեղիցի։

Կնացինք Դարման գեղ,
Գինին պանցուցինք ճրի տեղ,
Շեն կեներ են գեղ.
Ոխնած, խող ես, խող տառցի։

Գըլխու գեխից կուգա վոտաց թարաք, կասի.

Ողորմի Շամոյին, Շմրտողին,
Ամբրի տըկի քոռ Ակոյին.
Ողորմի ճամխներ շինողին,
Առվըներ խանողին,
Կարմնջներ կապողին.
Ոխնած, խող ես, խող տառցի,
Անշարժ յեղիցի։

Սուբ մեռելն ուր ծաղրն չի կանա պռնե, նաշի մեչ կը փիքա։

Տերտերն ի համան, պուռվար-պուտուկն կոլրի պարսատի պես, կուտա մարթու գլխուն, կսպանի, տանի թաղի։

Առավտուն մարթու ինգբրներ կուգան տերտերոչ կը խառցուցեն.

— Տերտեր, մեռելն ինչ արիր։

— Ծեր մեռելն հարեր եր, խազար ջորով մեռուցի, տարա թաղիցի։

ՍՇ., էջ 73—75 (Վն.)

ՃՈՉ ՊԱԽՍ ԻՆԱՆ ՏԵՐՏՐՈՉ ՋՈՐԻ ՖԱՍՈՒԼՅԵՔ

Տերտեր ճոչ պախսի առճին որ ուր ջոր քառսունին խատ ֆասուլյա կը լցի, վոր հմեն որ մե խա թալի, յեփ խլըսնի՝ ճոչ Զատկի որն իմա։

Տիրուխնին որըմ տերտրոչ շոր լվալու ժամանակ կը տխնա եռա ֆասուլյեք, ինքն ուր կասի. «Տերտեր ֆասուլյա կը սիրի. պիրեմ քիչըմ լցեմ ինոր ջոր, թո հա ուտի»։

Ըսկուն եվ կանի։ Տերտերն ի հըմեն որ մեկ խատ ֆասուլա կը խանի ջորից, ե՞, պռծնե՞լ կելներ...

Ճոչ պախսն եվ, քառսունքն եվ կընցնի, ամա են գեղի խամար Զատիկ չեր իկե։

Որըմ գեղակիհտեր կերթան, կը խառցուցեն.

— Տեր հայր, ճոչ Զատիկ յե՞փ պիտի գա։

— Թե ջորիս ֆասուլյեքտերաց իրիշկամ, ալա շատ կա...

ՍՇ., էջ 116 (Վն.)

ՍՈՒՏ ՏԵՐՏԵՐՈՋ ՊԱՏԱՐԱԳԸ

Վաղնեցիք յերկար ժամանակ առանց քահանա եյին։ Մի ալոր մարդ, գլխարկը տափակ դրած՝ գալիս և Վեղան և ասում, վոր ինքը տերտեր և։

Մի պառավ գալիս և նրա մոտ, առնում աչը և ասում.

— Աչքդ մեռնեմ, տերտեր, ինձի համար պիտի մի լավ պատարագ անես։

— Աչքիս վրա, պատասխանում և տերտեր ձևացողը։

— Ի՞նչ ու ի՞նչ են հարկավոր, հարցնում և պառավը։

— Մի՞թե մինչև որս պատարագ չես անել տվել, հարցնում և քահանան։

— Վո՛չ, լսել եմ, բայց չեմ տեսել, ուզում եմ, վոր մեր գյուղն ել պատարագ տեսնի։

Տերտեր ձևացողս ոգտվելով այդ բացատրությունից, հացից հետո պատվիրել եր յերկու փեթակների դռները փակել, վոր մեղուները դուրս չգան։

— Պատարագին շատ հարկավոր են, ասել եր նա։

Ժամը տասին ժամավորները մեկ-մեկ գալիս են, տերտերը պատվիրում և նրանց տկլորանալ և մտնել յեկեղեցին։ Յերբ վերջացնում են, տերտերը փեթակները տանում և յեկեղեցին, բաց անում դրանց դռները, և ինքը դուրս գալով յեկեղեցուց, դուռը փակում և։

Ճանճերը կծոտում են։ Ժամավորները մի քանի ժամ մեղուների ձեռքին տանջվելուց հետո, մի կերպ բաց են անում յեկեղեցու դուռը և իրանց ձգում գետը։

Իրիկնադեմին մարդիկ հավաքվում են, իսկ Պետին չկա։

Դես են կանչում, դեն են կանչում։ Պետին չկա ու չկա։

Մի պառավ հայտնում և, թե՝ մի քանի ժամ սրանից առաջ մի քանի պատարագ (մեղուներ) կպել եյին Պետու ջանից, և նա վազում եր գետի ընթացքով։

Ղ. Ժ., (Վղն.)

մուսներ հայկական հակակրոն. Ժողկոմից—5

ՊԱՅՏԸ ԼՈՒՍՆԻ ՏԵՂ ԸՆԴՈՒՆՈՂ ՔԱՀԱՆԱՆ

Վերջնեցին ճանապարհին կես պայտ գըտնելով, բերավ գյուղը և հավաքելով հասարակությանը, հարցրեց նրա ինչ լինելը։

— Այդ լուսինն է, հնացել է, ընկել է, — ասել եր տերտերը։

Xժ. (Վղն).

ՔՅՈԽՎԻ ՎՈՐԴԻՆ ՔԱՀԱՆԱ

Վեղանու քյոխվի վորդին գնաց ու այդ հասարակության համար քահանա ձեռնադրվեց։

— Սրբազան, աջիդ մեռնեմ, մարդիկ ինձ ինչպես են բարևելու, և յես ինչ եմ պատասխանելու, — հարցրել եր նորընծան։

— Մարդիկ քեզ կասեն՝ «Որհնյա ի տեր», իսկ դու կասես՝ «Աստված որհնե», պատասխանել եր յեպիսկոպոսը։

— Սրբազան, աջիդ մեռնեմ, դրանք դժվար բառեր են, խնդրեմ մի թղթի կտորի վրա գրեք և տաք ինձ։

Նորընծան ստանալով այդ գրված թղթիկը, դրել եր արխալուղի ջեբումը և ճանապարհ ընկել։

— Որհնյա ի տեր, գլուխ տալով, ասել եր նրան առաջին պատահողը։

— Կաց, ասել եր նրան նորընծան, ձեռքը տարել գրպանը թղթի կտորը հանելու, վոր կարդա գրվածքն ու նրան պատասխանի, բայց թուղթը պինդ տեղ լինելով, ուշացել եր, և մարդը մի 10—15 քայլ գնացել եր, վոր ահա նորընծան յետևից կանչելով ասել եր.

— Արխալուղիս ջեբինը քեզ որհնե...

Xժ. (Վղն.)

*

ՔԱՀԱՆԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Վեղանեցի մեկը հարցնում է տերտերին, ասելով.

— Տերտեր ջան, ուրուրը ամեն որ իմ ձագերից մեկը տանում է, ինչպես անեմ, որ դրա առաջն առնեմ։

— Գնա, ձագերի վոտները մեկ թելով կապկպտիր իրար հետ և թելի ծայրը կապիր նրանց մոր վոտներից, ուրուրը այլևս չի կարողանա քո ձագերը տանել։

Լսելով քահանայի խորհուրդը, ձագերի տերը այդպես էլ անում է։ Գալիս է ուրուրը և այս անգամ տանում ձագերին մոր հետ միասին։

Հ.Ժ. (Վղն.)

ԼՈՒՍԻՆ ՎՈՐՈՆՈՂ ՔԱՀԱՆԱՆ

Վեղան գյուղացիք տեսան, որ յերկար ժամանակ լուսինը չի յերևում, քահանայի հետ գնացին լուսինը վորոնելու։ Մի այրի մեջ տեսան, որ յերկու աչքեր փայլում են։ Տերտերն ասաց ժողովրդին.

— Այս լուսինն է։ Յես գլուխս կոխեմ այրը, իսկ դուք վոտերս բռնեք։ Յերբ յես վոտերս կթափահարեմ, դուք վոտերս պինդ ձիգ տաք։ Այդպես էլ անում է։ Բայց այրի մեջ փայլող աչքերը՝ արջի յեն լինում։ Քահանան գլուխը կոխելուն պես՝ արջը թըռնում, բռնում է տերտերի գլխից և ձիգ է տալիս։ Տերտերը ցավից վոտերը թափահարում է։ Մարդիկ պինդ ձիգ են տալիս վոտերից, և տերտերի մարմինը հանում են առանց գլխի։

— Խոսեք, հի՞նչ ըք ասում, տերեն գլուխը յերա ըլա, թա՞ չե,—հարցրին մեկը մյուսից։

— Չինք գտամ, — պատասխանեց մի խելոքը, դինըք ըրցըկնդանը հարցանք արըք։

Յեվ գնացին ու հարցրին յերեցակինին։

— Ըրցակեն, ըսորե տերեն գլուխը իրայըլա թա չե։

— Վայլահ, զեթ գիտայիս չիմ, պատասխանել եր յերեցակինը, համա դե իրգոնե հրռածած ուտիլիս տեղ, մրուքը տըմբալիսը լա։

Ժողովուրդը յետ դարձավ և իրար ասաց.

— Չէ, տերեն գլուխը յերեյը լած։

Հ.Ժ. (Վղն.)

ԳԻՐ ԶԳԻՏՑՈՂ ՏԵՐՏԵՐԸ

Կնկանմ՝ մեկը մարդուն յախան կը կըպի թը՝ տերտեր պըտի ըլլիս, որ ինձի երիցկնկա պատիվ տան։ Մարդուն չարան որ կառիկը, կերթա տերտեր դըլլի։

Ե՜, կարդալ չիտե, բան չիտե, ինչ ժամ պիտի ըսե։ Շաբաթը ժումըմ ժամ կերթա, կըսե.

«Ալաճա դուշ,
Ոտվին սավդուշ,
Գոչը սաղկար,
Ելլե բարձր,
Իջնի ցածր,
Փառք քեզ աստված»։

Մե որմ՝ ինչ գըլլի վարդապետմ՝ գուգա դեղը, տերտերոչ թուքը կը չորնա։ Ինչ ենե, որ խոր վարդապետին գեղեն քշե։ Կերթա ոտանները կըսե թը՝ ատ վարդապետը եկեր ե, որ մեզի ֆառմասոն դարձնե, ձեզի տեսնիմ, տղեք, թակար ինձի պես ժամ չըսաց, կոպլներն առեք ու իջեք։ Բիտտուն կոպլները կառնեն գուգան՝ փասա-փուսեն ժողովե, քաշվի կը։ Ասիկ, որ մեռել թաղելու գլլի, սալթ՝ «Ժամի խորան, խորխոռան» կըսե ու թաղե կը։ Մե որմ՝ հարուստմ՝ մեռնի կը, ասիկ գուգե որ՝ ասոր ծանտըը վերցնե՝ կըսե.

«Ժամի խորան, խորխոռան,
Գնացիր Տրապիզոն եկար նորան»։

Գեղացոց հերսը գելլե թը ինչ տեյի ատոր ատպես պըտի ծանտըռցընե, լավըմ ծեծեն, տերտերութենե դուրս կենեն կը։

Գուգա տուն, կնկանը պատմե կը, կնիկն ա կառնե կոպալմ՝ ու կուտա՝ «Ժամի խորան, խորխոռանը» քեզի հերիք չեր, ինչ կար գնացիր Տրապիզոն եկար նորան։

Խ. (Կրն.)

ԱՌԵ՛Ք, ԿԵՐԵՔ

Ոբըմ մարթըմ կը խառցուցի տերտրոչ.

— Տեր հայր, ետ ի՞նչխ ի, վոր հըմեն գյախ կասեք՝

— Պերեք ուտենք, պերեք ուտենք, մենակ պասարաքե-պաստարաք հաղորդության սկին կը պարզեք դեխ մե, կասեք՝

— Առեք, կերեք։

— Ե՞, վորտի, ախար սկիհի մեչինն ել ծեզնից ենք առե, ինոր խամար ըսկուն կասենք։

ՍՇ., էջ 51 (Վն.)

ՏԵՐՏԵՐ ԽՆԴԱՑ, ԺԱՄ ՏՆԴԱՑ

Կաճեցցի ջահել տղեմ՝ ամառ որմ՝ տաշտի մեջ ուրենց գեղի մոտ ծիմ՝ կը տիսնա կապուկ։ Ծին ճանջեր քշելու խամար, հա գլուխ կը վերուցի, կեճուցի։

Տղեն ծիուն կը խառցուցի.

— Չի տուտիս։

Ծին գլուխ կեճուցի տակ։

— Յեմ ժոքրն ել տուտիս։

— Ծին գլուխ կը վերուցի, կեճուցի։

— Յեմ խոքրն ել, յեմ խորոխպոքրն ել, մեր գեղակնուն ել, մեր տերտրոչն ել։

Ծին գլուխ կը վերուցի, կեճուցի։

Տղեն կիտի թե, վոր ծին գլուխ կեճուցի ցաձր, ծին ասած կելնի, գլխով կանի թե՝

— Խա, կուտեմ ծե։

Տղեն վազեվազ կը խասնի գեղ, հավար կը պիրի, թե տաշտի մեջ զաղանըմ կա, մեր գեղին, մեր գեղայնուն պիտի ուտի։

Գեղական հմեն կելնեն, վոր փախնեն, մեյն կասի.

— Ապա մեր ժամ, ժամն ել պիտի տանենք։ Կը պիրեն չվան կը թալեն ժամտան պուլոր, կը քաշեն, վոր տեղից խանեն, տանեն։

Կը տիսնան, վոր ժամ տեղից իրար չառնե, կը պիրեն տերտերն կը մտուցեն ժամ, գլուխ ժամտան

նեղ փենջարից կը խանեն տուս, չվան կը թալեն վիզ-
կը քաշեն։ Տերտեր կը խեխտվի, պուկըներ յետ կը
քաշվեն։ Կաճեցիք կիտեն, թե տերտեր կը ծծդա։

Մեչկըներաց մեյն կը բոռա.

— Դե, տղեյներ, քաշեք, վոլլա, տերտեր խնդաց-
ժամ տնդաց։

ՍՇ., էջ 106—107 (Վն.)

ԻՐԻՑԿԻՆ ՈՒ ՏԵՐՏԵՐ

Տերտեր տուն կուգա մե որ, կասի.

— Իրիցկին ջան, իրիցկին, չորս ծու խաշի ու-
տեմ, անոթուԹնե փորս վեց-վեց է անում։

Իրիցկին կերԹա չորս խա ծու կը խաշի, պիրի
կուտա՝ տերտերն ուտի։ Վերճի պրտուճ ուտելու ժա-
մանակ խոգին կուտա։

Իրիցկին կուգա ծնգներ կը տփի, կուլա, կասի.

— Ախը, տերտեր, Թե վոր մեռնել պեԹկ եր, էլ
են չորս ծուն ընչի՞ կերար. յես են չորս ծուն Թուխս
կը տնի, չորս ճետեր կը խանի, ճետեր կմեծցուցի,
չորս խավեր կանի, են չորս խավեր ելմ Թուխս կը
տնի, խտոնցով յես կը շախվի։

Ետասկնա կասի չում առավտուն։

Են գյախ, վոր կուգան տերտեր տանելու, ելմ կասի.

— Ա՜խ տերտեր, Թե վոր մեռնել պեԹկ եր, էլ են
չորս ծուն ընչի՞ կերար, յես են չորս ծուն Թուխս կը
տնի, չորս ճետեր կը խանի, ճետեր կը ճոճացուցի, մեկ
էլ Թուխս կը տնի, ինոնցով իմ տղեներ կը շախի։

Առավտուն կերԹան տերտեր Թաղելու. իրիցկին
կերԹա, վոր իրիցաԹաղ տան։

Ելմ ենտեղ կըսկսի բոռալ։ «Ա՜խ տերտեր, Թե վոր
մեռնել պեԹկ եր, էլ են չորս ծուն ինչի՞ կերար, էլ են
չորս ծուն ինչի՞ կերար...»։

Դասի մեջեն՝ մեկ աչքեն կոր տերտեր կուգա կը մոտանա իրիցկուն, կասի.

— Ախը մայրիկ, ասոթ ի, խայտառակութեն ի, «են չորս ծուն ընչի՞ կերար, են չորս ծուն ընչի՞ կերար», տրիր ես պոչին, կերթաս։ Ել ուրիշ պան չունե՞ս ասելու։

Իրիցկին կը տառնա տերտրոչ կասի.

— Ապա ի՞նչ ասեմ, կոր տերտեր, ապա ի՞նչ ասեմ, կոր տերտեր, ապա ի՞նչ ասեմ, կոր տերտեր...

Տերտեր կը տիսնա, վոր եսագրիս իրիցկին «չորս ծուն» եթող «կոր տերտերն» առեց պերան, նորեն կուգա կը մոտանա իրիցկնգան, կասի.

— Գենա առճվան ասա, իրիցկին, գենա առճվան ասա, իրիցկին։

Ա.Բ., № 414 (Վն.)

ԻՆՉԻ՞ ՀԱՅԻ ՄԵՌԵԼՆ ԵԺԱՆ Է

Ղըզըլղոչ ու Շիշթափա գեղերը իրար մոտիկ են, Ղըզըլղոչ հայի գեղ է, Շիշթափան ալ ֆռանկ են։ Մեռել բան ըլլելուս՝ կերթան իրարու սիրտ մխիթարելու։ Որ մը Ղըզըլղոչու տերտեր ֆռանկի տերտերին կըսե.

— Ինչո՞ւ ձեր մեռելը ետ ղղար թանգ է, մերը աժան է։

— Ինչու աժա՞ն է։

Կըսե.

— Մերը երկու մանաթ, իրեք մանաթ է, ձերը հիսուն մանաթ, հարուր մանաթ է։

Ֆռանկին տերտերը կըսե.

— Ետ ղղար բանը չե՞ս հասկցե դյոր հիմա։

Թե՝

— Չե։

— Դուք քավարան չունեք, եսոր համար է։ Դուք շիտակ արքայութեն կը տանեք մեռելին, մենք կը ձկենք քավարան, մեռելին տերը կուգա մեզի կը խընդրվի, ու դյոր քառասուն, հիսուն մանաթ չը տա, չենք հանե քավարանից։

Մ.Բ. Գ., էջ 17 (Դրջ.)

ԾՈՒՌ ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒՆԸ

Ուրանց գեղի ցանք կցաներ գավառագիտուն տիրացուն։ Քյասիբ մարթի մեկ գնաց խնթրեց, թե՝

— Ուրիշից յեզ եմ բերե, արի եթանք իմ արտը ցանի։

Տիրացուն ասեց.

— Ռեսի ու տերտերի արտն ա մնացե, յես եսոր վախտ չունեմ։

Խեղճ մարթ եկավ գնաց, ցանեց ուր արտ։ Սիրտ համա հախու կթփթփեր՝ յարափ բուսի՞, թե՞ չբուսի։

Արտը բուսավ, գավառագիտունին կանչին, տարան վըր արտին։ Գավառագիտուն տեսավ, վոր իրա ցանածից ել լավ ա բուսե։ Ասավ.

— Մովըլլա, ես իմ խացը տը կըտրի։

Ասավ.

— Լավ իս ցանե, համա եսա բուս, ենա բըսի տեղ պըտի եղներ, ենա բուս, եսա բըսի տեղ...

— Ապա ի՞նչ ենիմ, ըսավ։

— Գնաս տը պատարաք ենիս, վոր բուսեր փոխվին։

Խեղճ մարթը եկավ պատարաք երեց։

Արտը խասավ, քաղեցին, ռեսի ջոջ կալ չափեցին, ելավ ոխտ քոլոզ, պոլոզ-պոլոզ։ Խըղճի արտը քաղեցին, կալը ծեծին, չափեցին՝ ելավ տաս քոլոզ, պոլոզ-պոլոզ...

Վ.Բ. (Արզ.)

ԱՌԱԾՆԵՐ, ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ ՅԵՎ ԱՆԵԾՔՆԵՐ

Ս.

Աղքատ իրիցու քարոզը չի անցնի (չընցնա)։

ՓՇ., եջ 91 (Շբ.), ԱՀ. XII, եջ 96 (Ալբ.)

Ամեն մարդ իրենը գիտե, տերտերը՝ ամենուն։

Մս, 1902, եջ 491.

Առաջնորդը յես եմ, բակլեն խաշած եմ ցանում։

ՀԽ., եջ 27 (Աշտ.)

Դ.

Դու իմս գիտես, յես քումն, տերտերն մեր երկ-սուն։

ՊՎ., եջ 134 (Վն.)

Դրսեմեն գահանա, նեքսեմեն սատանա։

ԹՄԿ., եջ 90 (Թֆ.)

Թ.

Թեգուզ իրիցի բերանը գցես, թեգուզ՝ գիլի։

ԹՄԿ., եջ 99 (Թֆ.)

Թե մարթ չը գառնա, տերտեր խոմ կու գառնա։

ԹՄԿ., եջ 99 (Թֆ.)

Թուղթը շուռ տուր, աբասին կուլ տուր։

ՍՎ., եջ 66 (Աշտ.)

Ժ

Ժամանուն քանի ջոջ եղնի, տերտեր իր գիտցած կը կարդա։

ՅԵԼ., № 43, եջ 3 (Շախ.)

Ի

Ինչ վոր յերեցն ուտե ուրիշի տուն։

ԱՀ. VI, եջ 90 (Բլխ.)

Իրիցկին ըմին որ գադա չուտեր։

Մա. 1885, եջ 424 (Բզշ.)

Կ

Կարդա, բալամ, կարդա, մարդ չընես, տերտեր-վարդապետ ելա կընես։

ՀԺ. VII, եջ 82 (Աստ.)

Մ

Մալեն իրիցուն կըսը՝ պասակիր։

ՅԵԼ. № 28 (Մկ.)

Մարդ կա տերտեր կսիրի, մարդ կա՝ տերտրակին։

ՀԺԱ. Ա., եջ 34.

Ց

Յեկեղեցուն չանք մոմ չտաս, քու մուրազը չտար։

ԵԺ. VI, եջ 238 (Կլպ.)

Յեղ Վանից, ալյուր՝ Մահմտանից, ինչ կերթա վարդապիտից։

ՎՍ. I, եջ 125 (Վն.)

Ո

Ո՞վ ե իմացի, վուր տերտերի վուրթին լավը բահամ դա։

ԹՄԿ., եջ 171 (Թֆ.)

Զ

Զուստ գընե—հոգուհաց կա, կամաց կե—վողորմիս կա։

ԺԱԲ., եջ 115 (Ախց.)

Ս

Սատանին կու հավատան, տերտերին չեն հավատա։

ԵԺ. VI, եջ 245 (Ակ.)

Սար ու ձոր, տերտերի (տերտերոջ, տերտերու, իրիցու) փոր։

ՓՇ., եջ 123 (Շբ.), ՎՍ. I, եջ 136 (Վն.), Բրկ. 1898, եջ 133 (Կրն.), եջ 346 (Բղ.), ԱՀ. 7—8, եջ 502 (Ալշ.), ԱՀ. 6, եջ 97 (Բլխ.), Բրկ. 1900, եջ 219 (Եք.), ՀԱմ. 1887, եջ 197 (Խջր.) ԵԺ. VI, եջ 227 (Վղպ.), եջ 171 (Ալշ.) ԹՄԿ., եջ 152 (Թֆ.)

Սար ու ձոր, յերիցու փոր, վորքան վոր տաս՝ կասե «տուր-տուր»։

ՀԱմ. 1887, եջ 197.

Տ

Տերտերին միրուքն որ պատիվ ունենար, ածին գլխուն յերկնքեն լուս կիջներ։

ԱՂ. (Ախց.)

Տերտերի փորը մեծ կլա, ճեպը՝ ոխտը հատ։

ՀԺ. VII, եջ 101 (Խր.)

Տերտերները ոխտը փոր ունին, վորքան տաս՝ կառնին ու կուտեն։

ՀԱմ. 1892, եջ 383 (Տպղ.)

Տերտեր քենի անոթնա, բարեկենդնի քաթեն միտք կընկնա։

ԵԺ. VI, եջ 184 (Մշ.)

Տերտերին հարսանիք կանչեցին՝ մաշտոցը հետը տարավ։

ՀԺԱ., եջ 36.

Տերտերին աղիքը քնար շիներ են, քանի զարկեր են՝ «Անոթի յեմ՝ բերեք ուտեմ, անոթի յեմ՝ բերեք ուտեմ», ձայն կուտա յեղեր։

Բրկ. 1900, եջ 350 (Կսր.)

Տերտրոջ վըրեն լուս իջավ, վոչ տեսավ, ժանկոչը։

ԱՂ. (Շիր.)

Տերտերն առնելուն ղոչաղ ա, տալուն նաչաղ։

ԱՇ., եջ 155 (Աշտ.)

Տերտերի ասմունքը միշտ և ուզմունքը։

ՀԱմ. 1887, եջ 197.

Տերտերին կաշին թմբուկի վրա յեն անցուցեր, քանի զարնես՝ «տուր-տուր» կասե։

ՀԱմ. 1887, եջ 197.

Տերտերի փորը վայվայի պնակ ե, ինչ վոր դնես՝ կերթա։

ՀԱմ. 1887, եջ 197.

Տեր ելավ, տիրունն ե, տեր չելավ՝ տերտրունն ե։

Բրկ. 1899, եջ 554 (Քղ.)

Տերտեր արա, գեղը գցի (գցա, քցա, գցե), թե վոր չապրի (թե ապրի վոչ, թե չապրի, թե վոր չապրավ) գետը (ջուրը) գցի (գցա, քցա, գցե)։

ԵԺ. VI, եջ 228, 237 (Լռ., Վղպ.), ՀԺԱ., եջ 37, ՓՇ., եջ 124 (Շրկ.)

Տերտեր եղի գեղն ինկի, յերբ ուր չեղավ՝ գետն ինկի։

ՀԱ., եջ 213 (Ակն.)

Փ

Փիլոն թափին, մարդիկ խաբին։

Գ., եջ 104 (Խջ.)

Ք

Քահանա, փիլոնդ-վրեդ մըհանա։

ԵԺ. VI, եջ 237 (Լռ.)

Քամին իղարկ վարդապետի կնգուխ տարավ, ասաց՝ «Ինչ աղեկ, վոր քեզնից եղավ»։

ՎՍ. II, եջ 152 (Վն.)

Քահին վըրա լուս և իջել, վոչ և տեսե — գըզիրը։

ԺԱԲ., եջ 110 (Ախց.)

Ա Ն Ե Ծ Ք Ն Ե Ր

Ըրիցատար ըլիք (անասուններին անիծելիս)։

ԱՀ. XI, եջ 125 (Բրչ.)

Տերտերատար ըլին շորերըդ։

ԱՀ. XI, եջ 125 (Բրչ.)

Վանքը գրվեք (անասուններին անիծելիս)։

ԱՀ. XI, եջ 125 (Բրչ.)

ՅԵՐԳԵՐ

ԳՈՒՔԱՆԻ ՅԵՐԳ

(Հատված)

... Ազապ աղջիկ՝ ուժտնվորին,
Կարմիր խնձոր՝ ամլվորին,

. . . . . .

Սև պոլոզներ՝ վարդպետներին,
Սև կողոպուտ՝ տերտերներին,
Մեղք ու վարձեր՝ ռեյսներին,
Սոխ ու սխտոր՝ գզիրներին,
Արյուն-գռեխ՝ հրրամկերին...

ՀՇ., եջ 83 (Մշ.)

ՍԱՆԴԻ ՅԵՐԳ

(Հաստված)

Արեվն առեր վեր թոներուն,
Պատանք կարիմ մեր տերտերուն,
Զբխաս կանի ձիկ յեմ յարուն,
Յես տի մնամ յեմ կրարուն։
Հե՛յ խանե՛, խանե՛ մալմ՝ խանե,
Քը՛շ, քը՛շ, քը՛շ, քը՛շ, քը՛շ...

ՀՇ., եջ 173 (Մկ.)

ԻԼԻԿԻ ՅԵՐԳ

(Հաստված)

Տերտերն որհնեց, հերսոտավ,
Մանրե, ոլորե, թեշիկ ջան.
Լիւսոն լացեց, նեղսրտավ,
Ճեյեզ չունի, թեշիկ ջան։

ՀՇ., եջ 213 (Ծղ.)

ՀԱՐՍԱՆՅԱՑ ՊԱՐԵՐԳ[1]

(Հատված)

Բեռ դիզան, բեռ-բեռ դիզան,
Տեսեք են վոր ն ա.
Բեռ դիզան, բեռ-բեռ դիզան,
Են գեղի ռեան ա։

Խարխոներ խրխռալեն՝
Տեսեք են վոր ն ա.
Խարխոներ խրխռալեն
Վարդապետներն ա։

Շուն եկավ պարկն ի բերան,
Տեսեք են վոր ն ա.
Շուն եկավ պարկն ի բերան,
Գեղի՝ գզիրն ա։

Եժ. VI, եջ 35 (Ալշ.)

[1] Ցերգվում է հարսանյաց հանդեսին և այլուր (ժող. պարերգ)։

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՅԵՐԳ

(Հատված)

Թաք տանեյին, տանեյին,
Եծը տերտեր ենեյին.
Թաք տանեյին, տանեյին,
Կատուն սարկավագ ենեյին.
Թաք տանեյին, տանեյին,
Խորոզը ժամկոչ ենեյին...

ՀԲ., եջ 25 (Զվ.)

ԺՈՂ. ԽԱՂԻԿՆԵՐ

(Զան գյուլումներ)

Գիրակի եվ պաս կըլնի.
Երծաթից լավ թաս կըլնի.
Վորդիդ մեռնի վարդապետ,—
Սիրածը չհաս կըլնի։

Եսոր ուրբաթ ա, պաս ա,
Ծոցինդ երծաթե թաս ա,
Հոգիդ դատի, վարդապետ,
Խի իր ասում չհաս ա։

ՍՎ. (Աշտ.)

* * *

Եքուց ուրբաթ ե, պաս ե,
Դիմացը կալ ու կալս ե.
Իրիցի վուրթին մեռնի,
Նա ինձ ասավ «չըհաս ե»։

ԹՄԿ., էջ 61 (ԹՖ.)

ՍԻՐՈՒ ՅԵՐԳ

(Հատված)

Աստված քանդե իրիցու տուն,
Հըպամ կտրեց իմ աչքի քուն,
Գուլես մնաց աչքն ի ճամբաս,
Իրիցու տուն եղնի քամբաս։

Տե., էջ 103.

ՀԱՆԳԱՎՈՐ ԱՄՄՈՒՆՔՆԵՐ

* * *

— Վանքին՝ խալի.
Կոի[1] իգին[2],
Բառսուն փլոին[3],
Կապուտ ջորին,
Մեռնի կինը.
Առնե քենին.
Հաս է, հայը սուրբի։
Հաս է, հաս է,
Ոխտը պուրտեմեն ել անց է[4]։

ԹՄԿ., էջ 48 (Թփ.)

---

1 Գյուղի անուն։
2 Այգի։
3 Վոսկի։
4 Հասը կաշառքով հաս է դառնում։

* * *

Զաց մեր հանապատ,
Բանջրով կանափատ,
Մեղավոր զարկինք պատ՝
Համ գլուխ կոտրի, համ ճակատ։

ԵԺ. VI, եջ 374 (Ալշ.)

* * *

Ալելույա,
Բամբկե քուլա.
Ճահրան կոտրեր ե,
Նստեր, կուլա։

ԵԺ. VI, եջ 378 (Տվկ.)

* * *

Սարի սբբ Գեվորգ պուպլուղիկ.
Քուֆթա եփիմ, տամ քզիկ։

ԵԺ. VI, եջ 375 (Ալշ.)

ՎԱՐԴԱՊԵՏԻ ԺԱՄԱՍԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Տյու կյոռծի, յես մանեմ,
Յես մանեմ, տյու կյոռծի,
Յես մասրա լըցեմ, տյու մանի,
Յես կյոռծեմ, տյու մանի։

ՏԵՐՏԵՐԻ ԺԱՄԱՍԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Կուռծուն-կուռծուն,
Կուռծուն-կուռծուն,
Մեղ խավրա կեր ճըլպըլտուն,
Կեչներ ծառ, կեճներ տակ,
Պոչն իտև քյանց խառճըկաթ,
Տանձն ուտեր, պոչ թալեր տակ,
Կուռծուն-կուռծուն, կուռծուն-կուռծուն...

Վ.Ժ., եջ 5, № № 11, 12 (Վն.)

* * *

Ընթերցվածս Հոբա,
Երկու մարդ եկան Կոբա,
Զեռ ուրանց մեկ-մեկ զոբա,
Վիր դարկին կենին Թոպա.
Մեկն եր բոբիկ, մեկ գլխաբաց,
Նանե-Նանե, կտոր մի հաց,
Մեկ պլստաց, մեկ գնաց։

Ընթերցվածս Հելից,
Երկու մարդ եկան Գալից.
Ծեծեցին զռես, հանեցին գեղից։

Ընթերցվածս առակաց,
Երկու մարդ եկան Մոկաց,
Մեկի բերանն եր բաց,
Մեկին կորեկ եր քսպած։

Եժ. VI, էջ 371 (Ալշ.)

* * *

Խուգո խանգորց։
Քառսուն շուն, կես նխշուն,
Բալայք կատուն ճըլպըլտուն,
Գորդ ճրագուն
Խալի, երթա թշնամու խուգուն։

ՀՍ. Ա., էջ 22 (Վն.)

* * *

Զմոն նստե վըր չոր փեսին,
Ենտեն գետին, ենտեն գետին.
Ոսկիմ՝ ավին վարդապետին,
Զմոն հրա Սրգոյին պսակին։

Եժ. VI, էջ 372 (Ալշ.)

* * *

— Առ տատրակին, առ տատրակին,
Են տար, դիր մըջ տոպրըկին,
Ասուած, հարցն մերոց։

— Պոչն երկեն ի անիծածին,
Չպարարիկի մըջ տոպրըկին։

— Տար դյուս, պոչ կոտրակի,
Են բեր, դիր մըջ տոպրըկին,
Ասուած, հարցն մերոց։

Եժ. VI, եջ 377 (Վն.)

* * *

Խոնարհեցո, ապրեցո,
Դե պրտա, կեցո։
Խոզոց խանգյուցելոց,
Վոտքեր պոնի քաշի փուզոց։

Եժ. VI, եջ 377 (Վն.)

Յեկեղեցու ծառայողներին հեգնելիս ասում են.

Տեր վոզորմյա,
Տերտեր տոլմա,
Լուսարար քաշկա,
Ժամխար կայլա,
Վարդան ուտի,
Չկշտանա . . .

ՍՇ. (Վն.)

* * *

Ամեն-ամեն ասեմ ձեզ,
Դատեյք, պանեյք, պերեյք մեզ։

* * *

Տերտեր ժամտուն կը բռնա,
Ամեն, մարե, յես անոթի մեռա։

ՎՍ. Ա., եջ 28 (Վն.)

ԲԱՌԱՐԱՆ

Ա.

Աղըմ — բավականաչափ
Ակոլել — ավերվել, քանդվել
Աղեկ — լավ
Աման-ղաման — ժամ-ժամանակ
Ամոլվոր — աբոբի, դութանի կամ սայլի առաջին լուծը ամոլ վարող հոտաղը
Այան — հայտնի, ակնհայտ
Անդատել — առանց աշխատելու
Անուշ-չանուշ — քաղցրեղեն
Աշաբ-բուշաբ — առատ բուսականություն
Աչկել — սպասել, նայել, դիտել
Աջալա — շտապ
Աջալուց — շտապելուց
Արժընիկ — արժանի
Ափլիել — պատառ-պատառ անելը Խարխափելով մթության մեջ մի բան փնտռել
Ափչալովի — խարխափելով
Աքիել—արթնանալ,զգաստանալ։

Բ

Բալայք — աշխատ
Բանամ գալ — առաջ գալ յերեվան գալ
Բամպառակ — առակաբան, ծաղրաբան
Բաշլայել — սկսել
Բարեմ — գոնե
Բաքլայել — սպասել
Բետ դիղան — ցորենի կամ խոտի մեծ (բարձը) դեղը, գործ և ածվում փոխաբերական իմաստով
Բլլե — միգուցե
Բիտուն — բոլորը, ամբողջը
Բլիթ — կլոր ձևով, գաթայի նման հաց
Բրիշակ — ավերակ

Գ

Գեժդան-գեժ — ուշացած
Գեղայնու — գյուղացու, գյուղական
Գեղբան — գյուղը
Գենա — ելի, դարձյալ
Գեոլբկ — բանջարանոցի պահակի փոքրիկ տնակը
Գյախ — ժամանակ, պահ
Գողդուց — գողունի, թաքուն
Գոյ ա — հրեն, ահա
Գոպալ — մահակ
Գռեխ — թարախ, ժահր

Դ

Դալալ — մունետիկ. ազնիվ
Դամար — յերակ
Դան — այնտեղ. պահ
Դավաճի—հայցվոր. ուղղապան
Դարբար — այս ու այնտեղ (բակի մեջ և այլն)
Դեխ — դեպի
Դեռը — մինչև. այս անգամ. հերթ
Դնենք թե — յենթադրենք
Դողցուցել — ջերմել
Դոր — ձուր
Դրբվի — վիրաբեղից
Դունիա — աշխարհ
Դուշ եղնել — կպչել, կցվել, ապավինել
Դրսեմեն — դրսից։

Ե

Եմ — նորից, կրկին
Եման — վերսանին, նորից, դարձյալ
Եղնի — լինի
Են դիու — այն կողմի
Են դին — այն կողմ
Ենդոր — նրա
Ենել — անել
Եսա կանդար — այսքան, այսչափ
Եսա — այդ
Եսադին — այդ կողմ
Եսակնա — այդպես
Երևուս հանել — յերևան հանել
Եցկել — զցել։

Զ

Զաթի — արդեն, հենց
Զանգին — հարուստ, ունևոր
Զաս — բան
Զատն — հեռու
Զատնուց — հեռվից
Զեդ (եդ) — այդ
Զընթել — արթնացնել
Զի — ինձ
Զիդա (եդ) — այդ
Զոբա — փայտով ծեծ
Զվրոցնել — մեն ածել, ջղջել։

Ը

Ընծիկ — ինձ
Ընցուցել — մարել, անցկացնել
Ըռբաթել կամ ըռնաթիլ — հանգըստանալ
Ըսման — այսպես
Ըսկուն — այդպես
Ըրկցասար — յերեցի (քահանայի) տարած (ժող. անեծք)
Ըրջըվորդ — առաջնորդ։

Թ

Թադարուք — նախապատրաստություն
Թախում — սարք
Թակյար — թե վոր
Թահմին անել — զննել, ուշադիր դիտել
Թամբի անել — պատվիրել
Թառատուխով — շուքով, հանդիսով
Թառմ — յեկեղեցու վերնատունը, կանանց տեղը
Թարաք — կողմ
Թարիք եղել — թվել, պատմել, ուղղություն ցույց տալ
Թափան — խոտակեր անասունների փորը
Թաք — միայն թե
Թըխ — տե՛ս դեխ
Թլպիշ — թուլացած
Թոներ — թոնիր
Թոպա անել — յերդումով վերջ տալ
Թորկել — թողնել։

Ժ

Ժամխար — ժամհար
Ժամ — անգամ
Ժրեցուցել — առողջացնել, բուժել։

Ի

Իդա — այդ
Իդա հեղ — այդ անգամ
Իդարա — ապրուստ, հար
Իթյեմազ — շունը չի ուտի (ասում են խոզի պարանոցի մի մասին)
Իլլաջ — հար, հնար
Իլին — լիքը
Իծվան — այծեր
Իմալո — ինչպես վոր
Ինքյար անել — ուրանալ
Իշունց կամ ուշունց — հայհոյանք
Իպլ — բերեց
Իտոնցով — զրանցով
Իրես — յերես, դեմք
Իրիշկել — նայել, դիտել
Իրիցաթաղ տալ — քահանայաթաղ
Իրկել — յեփել։

Լ

Լաճ — տղա, արու զավակ
Լոխման — բժիշկ (Լոխման բժշկի անունից)
Լոդմա — պատառ
Լորտնեի — փայտը նետելով խփել
Լցուկ — լցված։

Խ

Խա-խատ — հատ
Խաղրել-հաղրել—պատրաստել
Խամաես անել — կերակուրի համը նախորոք տեսնել
Խանե — դոնե
Խաչխընել — խաչակնքել
Խատ — հատ
Խավիծ — ալյուրով, ջրով և յուղով ճաշ
Խատում կոտրել — վախից ծընկները թուլանալը
Խարաբա — ավերակ, անմարդաբնակ
Խաբեր — հաբյուր

Խաբխատ — ապուավ
Խեմ — նայիմ, տեսնեմ
Խընձ — վոնց վոր, ինչպես վոր
Խոխա — յերեխա
Խոսա գալ — խոստանալ
Խորոզ — աքաղաղ
Խորոտ — գեղեցիկ
Խոբաել — հարթել, կոկել. դատարկել մաքրել
Խուզու խանդրոց — հոգոց հանդուցելոց
Խուբ — հյուբ
Խուբջի — խուրջին
Խրատ — պատմություն, զրույց
Խրատ տալ — սովորեցնել։

Ծ

Ծուռ — խենթ. խեղաս, կոբիճ։

Կ

Կաթակոս — կաթողիկոս
Կալ ու կալս — կալ և կութ
Կակա — քաղցրավենիք (յերեխաների լեզվով)
Կայդա — ձև, յեղանակ
Կայլա — մսով կերակուր վորևե չորացրած բանջարեղենի կամ մրգի հետ խառն
Կանափատ (բանջրով) — կանեփի յուղով և ճակնդեղով պատրաստված կերակուր

Կատ անել—ջանք գործադրել. ի սրտե ցանկանալ
Կատի—պատավոր (կրոնական)
Կարիբ — պանդուխտ, պանդխտություն
Կեր — կար
Կերեր — կերակուրներ
Կըխի — տեսնում ե
Կըմաթ — բախտ, բաժին
Կրար — խոստում, վերջին խոսք։

Հ

Հալահլով — աղմուկով
Հախ — հասանելիք վարձը, իրավունքը

Հակուբա — խուրջին
Համան — անմիջապես
Հապեմ — ապա

Հառաջ — առաջ
Հարամ-զարամ անել — արդելք դառնալ, խանգարել
Հարի — մինչև վոր
Հարիր տոզան — հարյուր ինն-սուն
Հարըվ — մարդ, այ մարդ
Հեր — ինչու
Հերս — բարկություն
Հերատել — բարկանալ
Հըմեն — ամեն, ամբողջ, բոլոր
Հըմբա — այդպես
Հընկուլ — ընկած
Հընկցուցել — գցել
Հրատամ — տե՛ս Հատեմ

Հրա — հետ
Հրամակեր — հարամակեր, կաշառակեր, ուրիշի վատակով ապրող
Հիտա — բաժին, հատուկ
Հլամուն — իբր թե
Հլին — տե՛ս Իլին
Հմալ — այդպես
Հոնի — այնտեղ
Հորթոսալ — մեջտեղ
Հորի — ինչու
Հուրման — վոր կողմ
Հուրնե — իրանից
Հուքմ — ուժ, զորեցություն, բռնություն, իշխանություն։

Ձ

Ձիկ — լենձ։

Ղ

Ղզար — չափ
Ղոչազ — հարպիկ, կարիճ

Ղոչա — մեծ, անագին։

Ճ

Ճանրա — ճանապարհ
Ճամբաս — հանապարհ
Ճան — վնդ
Ճարընկնություն — մուրացկանություն
Ճեյեզ — ոժիտ, բաժին
Ճեռ — ճուտ (հավի), աքաղաղ
Ճըլպըլտուն — խատուտիկ

Ճիժ-պիժ — մանուկներ
Ճճգոտել — վրդովվել
Ճոզեր — հառագայթներ, շողեր
Ճոճացել — մեծացել
Ճոչ — մեծ, ավագ. անագին
Ճուռ — ազգի
Ճրագու — հարպ։

Մ

Մալե — մոլլա
Մարե — մայրիկ
Մեյ գիր — մեկ անգամ
Մեյվան — հյուբ

Մլել — խցկել, դուրս կամ ներս քշել
Մուրազ — իղձ, փափագ։

Նմուշներ հայկական հակակրոն. ժողովրդից—8

Ց

Ցալ — խմորից շինած ուտելիք՝ շան համար
Ցախա — ոձիք
Ցան — կամ. կողմ
Ցորդան — վերմակ։

Ն

Նալաթ — անեծք
Նաշ — դաղաղ
Նաչաղ — խեղճ
Նարու — նրա
Նեղեցուկ — հոգնած, բեզարած
Նեքսեմեն — ներքուստ, ներսից
Նղրել — ծեծել, դնքսել։

Շ

Շախել — շահել, խնամել
Շանց տալ — ցույց տալ
Շերբա — թոկ, պարան
Շիքել — շինել
Շվար — շվարած։

Ո

Ոլբել — վոլորել
Ոլբրտել — շրջել, թափառել
Ուժանվոր — գութանի ուժտուն լուծը վարող հոտաղը
Ուլում գոշակի — մանվան անկողին
Ումբ — կյանք։

Չ

Չալղըչի — նվագածու
Չալղի — նվագարան
Չախու — գրչահատ
Չամուռ — ցեխ
Չանք — մինչև վոր
Չարան կտրել — ճարահատվել
Չարուխ-բճով — տրեխ-գուլպայով
Չըմքի — վորովհետև
Չում — մինչև
Չուստ — շտապ
Չուր — մինչև, մինչև վոր։

Պ

Պալ — ժայռ
Պախկվել — պահվել, թաղնըվել
Պախս — պաս
Պառեկ — կոնակ, թիկունք, կողք

Պատել — ընկնել, գլորվել
Պարսիա — պարսատիկ
Պերայնավեր — յերեսնիվայր
Պլատալ — սայթաքել
Պուպուշ — ցցունք
Պուրդեմեն — պորտից
Պուժիկ — շեկ
Պրտուճ-բրդուջ — պատառ։

Ջ

Ջանդակ — դիակ
Ջիպ — բոլորովին. եկ ավելի
Ջլտակ — ցնցոտիների տակ
Ջնտա — դիվահար
Ջոպ-Ջեպ — գլուխն
Ջոջ — տե՛ս ճոչ
Ջորով — զոռով
Ջուապ — պատասխան. լուր։

Ռ

Ռազի անել — համաձայնել
Ռասա գալ — պատահել, հանդիպել։

Ս

Սաբախտան — լուսադեմին
Սալախ-սուլուխ — լուր, համբավ, տեղեկություն
Սալթ — միշտ, շարունակ
Սաղ — ամբողջ. ֆենդանի, առողջ
Սըթբրվորվել — տեղավորվել. հանգստանալ, պատսպարվել
Սիջիմի պես անձրև — տեղատարափ անձրև
Սիրոզուսեն — սիրաբանություն
Սոլ — կոշիկ
Սորա — հետո, այնուհետև
Սուտ մարել — կեղծ ուշաթափություն։

Վ

Վեր — վրա
Վըր — տե՛ս դեր
Վիռա — հապճեպ, շտապ
Վոն — ով
Վռիկ — անժուր ապուր։

Տ

Տերա — քահանա
Տեմաք — ասենք
Տղկել — թրջել
Տփել — ծեծել։

Փ

Փաթ գալ — շրջան կատարել. վերջանալ
Փառ — փեռուր
Փարա — փող, դրամ

Փեռբ-փոշման — գղջացած
Փթիր — ձիու աղբ
Փխքել — ծիծաղի պոռթկում
Փշում — մի փշուր

Փուռթկներ — փեռուբներ
Փուք — շունչ
Փոթընել — պոկ գալ, ազատվել։

Փ։

Քամբախ — ավերված
Քաշկա — ձավարով հաշ
Քար ու կռաբըշտի — քարքարոտ ու կռապաշտի
Քհնա — քահանա
Քլսա — տե՛ս Խլսա
Քյուլթ — շան ուտելու հաց
Քոլոզ — բարձրադիր գլխարկ
գորգենի շեղջ (առաջինի նըմանությամբ)
Քոշա — անկյուն
Քոչ ու բարխանա — տուն ու տեղ
Քումուն — քոնը
Քուփուր — տե՛ս Խշունց
Քրքրուկ — քրքրված։

Ֆ։

Ֆառմասոն — բողոքական (Ֆրանգ մասոն)
Ֆրռացուցել — ման ածել, պոտեցնել
Ֆիլան — այսինչ, այնինչ
Ֆուռա — հոտ։

ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

ԱԲ — Աբաշեն Բաբսեղյան. բանահավաքի ձեռագիր ժողովածուից։
ԱՀ — Ազգագրական Հանդես, խմբագրությամբ Յե. Լալայանի, Թիֆլիս։
ԱՂ — Աբամ Ղանալանյան. բանահավաքի ձեռագիր ժողովածուից։
ԱՇ — Աբշակ Շահնազարյան. բանահավաքի ձեռագիր ժողովածուից։
ԲԱ — Բարոյական առածներ. հավաքագրեց Ուստա Գեվորգ Բարխուդարյանց, Տփխիս, 1898 թ.։
Բլիս — Բուլանըխ կամ Հարք գավառ, Բենսե, Թիֆլիս, 1901 թ.։
Բրկ — Բյուրակն, լրագիր—շաբաթաթերթ, Կ. Պոլիս։
Գ — Գավառացի. Յերգեր, առակներ և այլն Խոտրջրոս, Տփխիս, 1903 թ.։
ԵԺ — Եմինյան ազգագրական ժողովածու, հատ. VI, ժող. յերգ, առած և այլն. հավաքեց Ս. Հայկունի. Մոսկվա—Վաղարշապատ, 1906 թ.։
ԹՄԿ — Թիֆլիսեցոց մասվոր կյանքը, մատն Ա., Գ. Տեր-Աղեքսանդրյան, Թիֆլիս, 1886 թ.։
ԺԱ — Ժողովրդական առակներ, հավաքեց Ս. Հայկունի, Վաղարշապատ, 1907 թ.։
ԺԲ — Ժողովրդական անգիր բանաստեղծություններ, ժողովեց Տիգրան Վարդանյանց, Թիֆլիս, 1901 թ.։
Կռ — Կռվածաղիկ (2-րդ տպագրություն), Գ. Գուշյանց, Տփխիս, 1897 թ.։
ՀԱ — Հնություն Անկա, Հ. Կ. Ճանիկյան, Թիֆլիս, 1895 թ.։
ՀԱմ — Հանդես ամսօրյա։
ՀԺ — Հայ ժողովրդական հեքիաթներ, ժողովածու Տիգրանա Նավասարդյանց, Թիֆլիս։
ՀԺԱ — Հայ ժողովրդական ավանդություններ, ժողովածու Տիգրանա Նավասարդյանց, Յերևան 1883 թ.։

ՀԽ — Հայի խնդիր (2-րդ տպագրություն), Պ. Պռոշյանց, Տըփխիս, 1904 թ.։

ՀՇ — Հայ շինականի աշխատանքի յերգերը, կազմեց և խմբագրեց Արամ Ղանալանյան, Յերևան, 1937 թ.։

ՄԲ — Մարգարիտներ հայ բանահյուսության, խմբագրությամբ Յե. Լալայանի, Թիֆլիս։

Մս — Մասիս։

ՅԵԼ — Յերվանդ Լալայան. բանահավաքի ձեռագիր ժողովածուից։

ՅԵՊ — Յերվանդ Պեզազյան. բանահավաքի ձեռագիր ժողովածուից։

ՆՄ — Նազարեթ Մաքսիրոսյան. բանահավաքի ձեռագիր ժողովածուից։

ՈՒՋ — Ուլնիա կամ Զեյթուն, Հ. Ալլահվերդյանի, Պոլիս, 1884 թ.։

ՋԲ — Ջավախքի բուրմունք. հավաքեց Յե. Լալայան, Թիֆլիս, 1892 թ.։

ՍՇ — Սենեքերիմ Շալջյան. բանահավաքի ձեռագիր ժողովածուից։

ՍՎ — Սոս և Վարդիթեր (2-րդ տպագրություն), Պ. Պռոշյանց, Թիֆլիս, 1887 թ.։

ՎԲ — Վարդ Բդոյան. բանահավաքի ձեռագիր ժողովածուից։

ՎԺ — Վանա ժողովրդական յերգեր, ազգագրական ժողովածու, ձայնագրեց՝ Սպիրիդոն Մելիքյան, Յերևան, 1927 թ.։

ՎՍ — Վանա սաղ, Ա. մաս, Գ. Շերենց, Թիֆլիս, 1885 թ.։

ՏԽ — Տաղեր ու խաղեր, խմբագրեց և կազմեց Աղեք. Մխիթարյանց, Աղեքսանդրոպոլ, 1900 թ.։

ՓԲ — Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, ժողովեց Գ. Հովսեփյան, Թիֆլիս, 1892 թ.։

ՓՇ Փշրանքներ Շիրակի ամբարներից, հավաքեց Աղ. Մխիթարյանց, Եմինյան ազգագրական ժողովածու, հատ. Ա., Ալեքսանդրոպոլ—Մոսկվա, 1901 թ.։

Ք Ժ — Անհայտ բանահավաքի ձեռագիր պատառիկներից։

ՀԱՄԱՀԱՅԿ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ

Ալշ — Ալաշկերտ
Ախց — Ախալցխա
Աշտ — Աշտարակ
Ապ — Ապարան
Աստ — Աստապատ
Արզ — Արզնի
Բլխ — Բուլանըխ
Բղշ — Բաղեշ
Բրչ — Բորչալու
Դրջ — Դերջան
Զթ — Զեյթուն
Եք — Եքրեկ
Թփ — Թիֆլիս—Թբիլիսի
Լն — Լենինական
Լռ — Լոռի
Խջ — Խոտրջուր
Խր — Խրիմ—Ղրիմ
Խրբ — Խարբերդ
Ծղ — Ծղալքբիլա
Կլպ — Կուլպ
Կսբ — Կեսարիա
Կտ — Կոտայք
Կրն — Կարին
Մկ — Մոկս
Մշ — Մուշ
Յեվն — Յերևան
Շրկ — Շիրակ
Շախ — Շատախ
Զվ — Զավախք
Ռշտ — Ռշտունիք
Վղն — Վեղան
Վղպ — Վաղարշապատ
Վն — Վան
Տպղ — Տրապիզոն
Տվկ — Տիվրիկ
Փղ — Փղի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եր

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐՈՒՄ . IX
Антирелигиозные мотивы в армянском фольклоре . XXI

ԱՌԱԿՆԵՐ, ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ՅԵՎ ՄԱՆՐ ՀԵՔԻԱԹՆԵՐ

Գառվու խրատ ասածուն 3
Շերեփը՝ կացին 4
Աղվեսն ու կաթավ 5
Սլիկ երեց 6
Գառավ դաս կը տա տերտերոչ 11
Լեզվիս տըկի քար խանեմ 12
Տերտերոչ մուրուս 13
Իշունցուսը խոստովանող 14
Կամ յես կմնամ գեղ, կամ՝ չամաը 16
Դավըռցին ու տերտերը 17
Գել ու աղվես 18
* * * 19
Սպիտակ երեսը 20
Գատակը վեղանցիք և վարդապետը 21
Ծաղրված վարդապետը 23
Կասես-կասես, չես իզա 25
Տերտերոչ ադչիկ 27
Վարդապետն ու մոնթը 32
Քահան ու իրիկվինը 34
Գաբնիգեղցի Մոսոյի հարանիքը 36
Գող տերտերը 40

Եր

Ագահ տերտեր 42
Խոստովանահայրը 43
Գող վարդապետ 44
Եղմիածնի գող վարդապետ 48
Անկշռում տերտեր 51
* * * 57
Երթամ Տրապիզոն 58
Սուտ տերտեր 61
Ճոչ պախչ ինան տերտրոչ ջոբի ֆասուլյեր 63
Սուտ տերտերոջ պատարագը 64
Պայտը լուսնի տեղ ընդունող քահանան 66
Քյոխվի վորդին քահանա 67
Քահանայի խորհուրդը 68
Լուսին վորոնող քահանան 69
Գիր չգիտցող տերտերը 70
Առեք, կերեք 72
Տերտեր խնդաց, ժամ անդաց 73
Իրիցկին ու տերտեր 75
Ինչի՞ հայի մեռելն եժան է 77
Ծուռ գավառագիտունը 78

ԱՌԱԾՆԵՐ, ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ ՅԵՎ ԱՆԵԾՔՆԵՐ . . 79

ՅԵՐԳԵՐ

Գութանի յերգ 89
Սանդի յերգ 90
Իլիկի յերգ 91
Հաբանյաց պարերգ 92
Կենցաղային յերգ 93
Ժող. խաղիկներ 94
* * * 95
Սիրու յերգ 96

ՀԱՆՑԱՎՈՐ ԱՍՄՈՒՆՔՆԵՐ 97

Բառարան 107
Համառոտություն ապրյուրների 117
Համառոտություն տեղանունների 121

Պատ. խմբագիր Հ. ԴՐՈՆՈՅԱՆ
Տեխ. խմբագիր ՏՐԻԲՈՒՆ
Սրբագրիչ Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ուսեցող. սրբագրիչ Ռ. ՏՈՆՅԱՆ

Отв. редактор Г. ДРНОЯН
Тех. редактор ТРИБУН
Корректор В. МАНУКЯН
Отв. корректор Р. ТОНЯН

Շապիկի նկարը Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
Рис. обложки Г. КАРАПЕТЯНА

Գրավիրի լիազոր 6686, հրատ. № 15
Պատվեր № 578, Տիրաժ 3000
Հանձնվել է արտադրության 8/X 1938 թ.
Ստորագրվել է տպագրելու 22/XII 1938 թ.
ԳԻՆԸ 4 Ռ.
ЦЕНА 4 Р.

Պետհամալսարանի հրատարակչության տպարան, Յերևան, Տերյան 72.

40687